ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ 1990-1995ԻՆ

ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐԵԱՆ
lilitzakaryan66@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1990-95 շրջանը Հայաստանի անկախացման եւ պետականութեան վերականգնման ժամանակաշրջան էր: 1988 Փետրուարին սկիզբ առած ղարաբաղեան շարժման արդիւնքում հայ հասարակութեան գիտակցութեան մէջ սկսեց ձեւաւորուել անկախութեան գաղափարը, երկու տարուայ ընթացքում հասարակութեան մեծ մասը ընդունեց դրա անհրաժեշտութիւնը եւ պայքար սկսեց անկախութեան համար: 1990ին այդ պայքարը հրապարակներում եւ փողոցներում անցկացուող ցոյցերից տեղափոխուեց խորհրդարան՝ ՀԽՍՀ գերագոյն խորհրդի դահլիճ: Շարժումն առաջնորդեց «Ղարաբաղ» կոմիտէի[1] ծնած Հայոց համազգային շարժումը՝ ՀՀՇն, որը եւ շուտով, խախտելով Կոմունիստական կուսակցութեան 70ամեայ մենատիրութիւնը, ընտրութիւնների միջոցով մտաւ խորհրդարան: Անկախութեան վերաբերեալ ծրագրեր դեռ 1987ից ինքնահրատ *Անկախութիւն* թերթի միջոցով տարածում էր ԱԻՄը[2], բայց հասարակութեան լայն շրջանակներին դրանք անծանօթ էին: Բացի այդ, հայ հասարակութիւնը այդ ժամանակ դեռեւս պատրաստ չէր ընդունելու անկախութեան գաղափարը: 1988-90՝ այդպիսի ծրագրեր սկսեցին ներկայացնել ՀՀՇն եւ արագ առաջացող հասարակական-քաղաքական այլ կազմակերպութիւններ, որոնք դրանք տարածում էին իրենց ինքնահրատ պարբերականների եւ հանրապետական ՁԼՄներով: Բայց դրանք ընդամէնը նոր ձեւաւորուող կազմակերպութիւնների ծրագրային դրոյթներն էին: ԽՍՀՄ փլուզումը մօտ չէր թւում եւ յոյս չկար, որ Հայաստանը մօտ ապագայում կ'անկախանայ: Ցոյցերում, հաւաքներում, հիմնարկների ձեռնարկութիւնների պաշտօնէութեանց ժողովներում քննարկւում էր միայն անկախութեան գնալու կամ չգնալու հարցը,

---

[1] Ղարաբաղ կոմիտէն, ձեւաւորուել է 1987-88ին: 1988 Մարտին հրապարակուեց կոմիտէի առաջին կազմը՝ Իգոր Մուրադեան, Վաչէ Սարուխանեան, Վազգէն Մանուկեան, Համբարձում Գալստեան, Սամսոն Ղազարեան, Աշոտ Մանուչարեան, Գագիկ Սաֆարեան, Զօրի Բալայեան, Սիլվա Կապուտիկեան: Ղարաբաղ կոմիտէի սկզբնական նպատակն էր՝ ԽՍՀՄ իշխանութիւնների ուշադրութիւնը հրաւիրել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիաւորելու հայ ժողովրդի պահանջին:

[2] Ազգային ինքնորոշում միաւորումը (ԱԻՄ) ստեղծուեց 1987ին Պարոյր Հայրիկեանի խորհրդային աքսորից հայրենիք վերադառնալուց յետոյ: Այն իր հրատարակուող *Անկախութիւն* եւ *Հայրենիք* պարբերականների միջոցով աշխատանք էր ծաւալում հայ հասարակութեան մէջ անկախութեան գաղափարը արմատաւորելու ուղղութեամբ:

բայց ինչպիսի՞ պետութիւն պէտք է ստեղծուէր, ի՞նչ կառուցուածքով՝ չէր քննարկւում: Այդ քննարկումը գերագոյն խորհրդում ծաւալուեց 1990ի կէսին՝ անկախութեան հռչակագրի մշակման եւ ընդունման ընթացքում:

Մինչ նոր սահմանադրութեան ընդունումը, որոշուեց փոփոխութիւններ կատարել 1978ին ընդունուած ՀԽՍՀ սահմանադրութեան մէջ (որն ըստ էութեան ԽՍՀՄ սահմանադրութեան կրկնօրինակն էր), միաժամանակ՝ պահպանել ՀԽՍՀ կառավարման մարմինները: Սկսուեց անկախ պետութեան խորհրդանիշերի ձեւաւորման գործընթացը:

Պետականաշինութիւնը նոր թափ ստացաւ 1991 Սեպտեմբերի 21ի անկախութեան հանրաքուէից յետոյ: Նոյն տարուան Հոկտեմբերին պետութեան կառոյցի մէջ էական փոփոխութիւն կատարուեց՝ հիմնուեց ՀՀ նախագահի պաշտօնը: ՀՀ ԳԽն ստիպուած եղաւ իր լիազօրութիւնների մի մասը զիջել նախագահին: Սահմանադրութեան բացակայութեան պայմաններում իշխանութեան թեւերի միջեւ երբեմն պայքար էր գնում, որն ունէր թէ՛ առարկայական, թէ՛ ենթակայական պատճառներ: Հակասութիւններ կային նաեւ հանրապետութեան իշխանութեան բարձրագոյն մարմինների եւ տեղական կառավարման մարմինների՝ ժողովրդական պատգամաւորների տեղական խորհուրդների միջեւ: Եթէ այդ ամէնին գումարենք 1988ի աւերիչ երկրաշարժի հետեւանքով գոյացած աղէտի գօտին իր ուրոյն հիմնախնդիրներով, հայ-ադրբեջանական հակամարտութեան հետեւանքով անընդհատ առաջացող նոր խնդիրները (Ադրբեջանում կազմակերպուած հայկական ջարդերի հետեւանքով հազարաւոր փախստականների փախուստը Հայաստան, ՀՀ շրջափակումները, վառելիք-ուժանիւթի ճգնաժամը), պարզ կը դառնայ, որ պետականաշինութիւնն ընթանում էր ծայրայեղ դժուարին պայմաններում: Սկզբում տարերայնօրէն, այնուհետեւ կանոնակարգուած սկսուեց հայոց բանակի ձեւաւորումը: Սկսուեց սեփականաշնորհման գործընթացը: 1991-95՝ ընկերային-տնտեսական ճգնաժամը, արդիւնաբերութեան փլուզումը, ահռելի չափերի գործազրկութիւնը ընկերային բեւեռացում առաջացրին: Բնականաբար այդ ամէնը յանգեցրեց երկրում քաղաքական պայքարի սրմանը, քաղաքական նոր կուսակցութիւնների առաջացմանը, դրանց առճակատմանը: Քաղաքական ուժերի միջեւ հակասութիւնները սրւում էին յատկապէս ազգային խնդիրների, Ղարաբաղի հարցի, պատերազմի եւ խաղաղութեան հարցերի շուրջ: Այդ պայմաններում ընթացաւ սահմանադրութեան նախագծի մշակումը եւ հանրապետութեան ապագայ դրոյթի ընտրութիւնը, որն աւարտուեց 1995 Յուլիսի 5ին՝ ՀՀ սահմանդրութեան ընդունումով: Դրանով սկսուեց պետականաշինութեան նոր փուլ:

Յօդուածում պետականաշինութեան խնդիրները ներկայացուած են ՀՀ Ա. խորհդարանի՝ գերագոյն խորհդի պատգամաւորների մօտեցմամբ եւ արժեւորմամբ: Յօդուածը ներկայացնում է պետականաշինութեան նկատմամբ պատգամաւորների հայեացքների, մօտեցումների շարժընթացը:

Յօդուածի համար հիմք են ծառայել ՀՀ ազգային ժողովի արխիւային փաստաթղթերը, քաղաքական գործիչների աշխատութիւններ ու յօդուածներ, թեմային վերաբերուող սակաւաթիւ գրականութիւնը:

ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԳԽՈՒՄ

Պետութեան կառուցաւորումը կամ պետականաշինութիւնը բարդ գործընթաց է: Այն առաւել բարդ է այն ժողովուրդների համար, որոնք դարեր շարունակ զրկուած են եղել դրանից: Պատմական Հայաստանում Բագրատունեաց հարստութեան անկումով հայերը կորցրեցին պետականութիւնը 1045ին, Կիլիկիայում՝ 1375ին: Հայ ժողովուրդը կանգնեց պետութիւնը վերականգնելու փաստի առջեւ[3] 1918ին եւ բարդագոյն պայմաններում իրականացրեց դա, արարուեց Հայաստանի առաջին հանրապետութիւնը, որը թէպէտ գոյատեւեց ընդամէնը 2 տարի, բայց հիմքեր ստեղծեց ԽՍՀՄ կազմում Հայկական խորհրդային հանրապետութեան գոյութեան համար: Խորհրդային Հայաստանը թէպէտ անկախ չէր, բայց 70 տարիների ընթացքում նպաստաւոր պայմաններ ստեղծուեցին տնտեսութեան զարգացման համար, Հայաստանը դարձաւ արդիւնաբերական երկիր, հնարաւորութիւն ստացաւ զարգացնել ազգային մշակոյթը, ունենալ բարձր որակի կրթական համակարգ, պահպանուել որպէս ազգային օջախ համայն հայութեան համար: Դրա հետ մէկտեղ այն անկախ չէր եւ այդ ամէնն ունէր խորհրդային իշխանութիւնների կողմից գծած որոշակի սահմաններ, ինչ վերաբերւում էր ազգային խնդիրներին, դրանք խորհրդային խօսոյթից դուրս էին եւ փոխարինուել էին «ինտերնացիոնալիզմի գաղափարախօսութեամբ»:

1988ին ղարաբաղեան շարժումը նպաստեց ազգային ինքնագիտակցութեան աճին, ազգային երազանքների զարթօնքին: Դրա հետ մէկտեղ 1988ին Ադրբեջանում Սումգայիթով սկսուած հայկական ջարդերը հայ հասարակութեանը դարձեալ յիշեցրեցին պատմութեան դառը դասերը եւ հայ ազգայնական գաղափարախօսութեան ուժեղացման պատճառ հանդիսացան: Հայ հասարակութեան մէջ ԽՍՀՄից անկախացման հայտ ձեւաւորուեց այն ժամանակ, երբ պարզ դարձաւ, որ «վերակառուցուող» ԽՍՀՄում հայ ազգն ապահով չի, ազգային հիմնախնդիրները ոչ միայն չեն ողջունւում, այլեւ հետապնդւում են[4]: Կարելի է ասել, որ հասարակական գիտակ-

---

[3] Չնայած անկախութիւնը նուիրական երազանք էր, բայց Արեւելեան Հայաստանում Մեծ Եղեռնից յետոյ արեւմտահայերի զանգուածային ներգաղթի պայմաններում, առաջին աշխարհամարտի հետեւանքով ստեղծուած անկանխատեսելի պայմաններում Ռուսաստանից անկախանալը հայերի համար այդքան էլ ցանկալի չէր: Այդուհանդերձ, 1918ին ստեղծուեց Հայաստանի Հանրապետութիւնը:

[4] Այդ մասին աւելի մանրամասն տես՝ «Անկախութեան օրակարգի ձեւաւորումը Անկախութեան հրապարակում եւ Գերագոյն խորհրդում» յօդուածում (*Հայկազեան հայագիտական հանդէս*, 43/2:2023 https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haigazean/43(2).pdf):

ցութիւնը բաւականին լուրջ փոխակերպում ապրեց եւ ընդունեց անկախութեան գաղափարը, իսկ ՀԽՍՀ խորհրդարան մտած նոր քաղաքական ուժերը այն ամրագրեցին քաղաքական օրակարգում եւ սկիզբ առաւ պետականաշինութեան գործընթացը: Հայաստանը պէտք է միքանի փոխակերպումների միջով անցնէր՝ դաշնակցային պետութեան հանրապետութիւնից դառնար միասնական պետութիւն, խորհրդային միջազգայնական գաղափարախօսութիւնից անցում կատարէր ազգային գաղափարախօսութեան, պլանային տնտեսութիւնից՝ շուկայական տնտեսվարման, միակուսակցութիւնից՝ բազմակուսակցական համակարգի եւն.: Այդ պայմաններում հարց առաջացաւ՝ իսկ ինչ՞ից սկսել:

Ամէն ինչ սկսուեց Անկախութեան հռչակագրի բնագրի մշակումից, որովհետեւ այդ փաստաթղթում պէտք է երեւար անցնելիք ուղին: Սկսուեցին Հռչակագրի բնագրի մշակումն ու քննարկումները, որոնք նաեւ քննարկումներ էին ստեղծուելիք պետութեան ձեւի եւ բովանդակութեան վերաբերեալ:

Անկախութեան հռչակագիրը մշակող յանձնաժողովը 3 տարբերակ ներկայացրեց ԳԽ քննարկմանը[5]: Երկրորդ եւ երրորդ տարբերակները տարբերւում էին նախաբանով եւ այդ պատճառով համարակալուած էին 2ա եւ 2բ, առաջինն էականօրէն տարբերւում էր այդ երկուսից: Պատգամաւորները կանգնեցին բարդ խնդիրների առջեւ, նրանք պէտք է կողմնորոշուէին հայեցակարգային հետեւեալ հարցերում՝ ինչ՞ համար է ընդունւում Հռչակագիրը, ի՞նչը պիտի հաստատուի Հռչակագրով: Խօսքը գնում էր հետեւեալի մասին՝ արդեօք նորաստեղծ պետութիւնը 1918-20ի Հայաստանի Հանրապետութեան իրաւայաջորդն է թէ՞ ազգային ինքնորոշման իրաւունքի հիման վրայ ստեղծուող բոլորովին նոր պետութիւն: Կարեւոր էր նաեւ, թէ ինչպէ՞ս հռչակել անկախութիւնը՝ միանգամից յայտարարել անկախութիւն եւ սկսել բանակցութիւններ ԽՍՀՄ ղեկավարութեան հետ, թէ՞ ընդունել, որ Հայաստանը կիսանկախ պետութիւն է, ԽՍՀՄ կազմում մնալով աստիճանաբար ընդլայնել այդ անկախութեան սահմանները եւ քաղաքական իրավիճակից ելնելով, ինչ-որ մի յարմար պահի հռչակել անկախութիւն: Յաջորդ հարցը, հետեւեալն էր՝ այն ժամանակաւո՞ր, թէ՞ լրջագոյն փաստաթուղթ է, որում պէտք է արտացոլուեն ապագայ անկախ Հայաստանի, որպէս պետութեան, հայեցակարգային հիմնադրոյթները եւ որի հիման վրայ պէտք է մշակուի ապագայ սահմանադրութիւնը: Եւ վերջապէս կարեւոր էր, որ որոշակիօրէն երեւայ վերաբերմունքը միութենական նորացուող պայմանագրի նկատմամբ, որն առաջ էր մղում ԽՍՀՄ ղեկավարութիւնը: Պէտք է ասել, որ ԽՍՀՄում սկսուել էր «*սուվերէնութեան* շքերթ», այսինքն ԽՍՀՄ

[5] Տարբեր քաղաքական ուժերի կողմից ներկայացուած տարբերակների թիւը հասել էր մէկ տասնեակի, բայց քանի որ դրանք որոշակի ընդհանրութիւններ ունէին՝ որոշները միաւորուեցին (Էդիկ Մինասեան, *Հայաստանի երրորդ հանրապետութեան պատմութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2013, էջ 113):

բոլոր հանրապետութիւնները իրենց հռչակում էին ինքնիշխան, անգամ՝ Ռուսաստանը եւ Բելառուսիան, որոնք աւանդաբար միութիւնը պահպանելու կողմնակիցներ էին: Սկսուել էր հռչակագրերի ընդունման գործընթացը: Բայց այն ժամանակուայ մօտեցմամբ ինքնիշխանութիւնն ու անկախութիւնը 2 տարբեր հասկացութիւններ էին: Դա վառ կերպով երեւաց նաեւ Հայաստանի գերագոյն խորհրդի նախագահի ընտրութեան ընթացքում 2 ամենաշատ ձայներ շահած թեկնածուների ելոյթներում՝ Վլադիմիր Մովսիսեանի, որը ԽՍՀՄ կազմում Հայաստանի ինքնիշխանութեան ընդլայման կողմնակից էր, եւ Լեւոն Տէր Պետրոսեանի, ով հանդէս եկաւ Հայաստանի անկախութեան օգտին: Տէր Պետրոսեանի ՀԽՍՀ ԳԽ նախագահի պաշտօնում ընտրուելն ազդարարեց, որ հայոց խորհրդարանը ընտրում է երկրորդ ուղին:

Յաջորդ հարցը հետեւեալն էր՝ Հռչակագիրը միայն քաղաքակա՞ն փաստաթուղթ է թէ՞ դրանում պէտք է արտայայտուած լինեն նաեւ յետագայ քաղաքականութեան տնտեսական եւ հոգեւոր տեսանկիւնները: Իհարկէ հասկանալի էր, որ եթէ հանրապետութիւնը գնում էր անկախութեան, ուրեմն տնտեսական, ֆինասավարկային, մշակութային, գիտակրթական ասպարէզներում էլ է անկախ քաղաքականութիւն վարելու, բայց քանի որ պատգամաւորներից շատերը ուզում էին, որ այն դառնայ ապագայ սահմանադրութեան հիմքը, կարեւորում էին, որ այդ ոլորտների հայեցակարգային հիմնադրոյթները հռչակուեն Հռչակագրում:

Կարեւորագոյն հարցերից էր Հայ Դատի նկատմամբ վերաբերմունքը: Այն պէտք է արտացոլուէր Հռչակագրում որպէս համայն հայութեան մեծագոյն ցաւ եւ հիմնախնդիրներից մէ՞կը, թէ՞ ոչ: Պատգամաւորների մեծ մասը ընդունում էր Հայ Դատը որպէս հայութեան լրջագոյն հիմնախնդիր: Խիստ պատկերաւոր է Հայ Դատը գնահատել քաղաքական գործընթացների ղեկավարներից Վազգէն Մանուկեանը, ով դրա մէջ տեսնում էր ինչպէս նեղ ըմբռնում, այնպէս էլ համընդհանուր. «*Նեղ ըմբռնումը կապուած է Օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութեան հետ, երբ մեր նախապապերին վտարեցին իրենց տարածքներից, շատերին պարզապէս բնաջնջեցին, իսկ միւսները ցրուեցին աշխարհով մէկ: Բնական է, ժողովրդի մէջ պատմական արդարութեան պահանջ, կորցրածը վերադարձնելու եւ անգամ վրիժառութեան անհրաժեշտութիւն առաջացաւ: Այդ զգացմունքները, ինչպէս բաց վէրք, մշտապէս ապրում էին ժողովրդի հոգում: Միաժամանակ հայերի մէջ միշտ եղել է պետականութեան եւ հայրենիքի երբեմնի հզօրութեան վերականգնման, իբրեւ համաշխարհային ուժեղ ազգ պատմական թափերաբեմ վերադառնալու երազանքը: Հենց այդպէս եմ ես ընկալում Հայ Դատի համընդհանուր իմաստը, որը աւելի լա՛ւ է անուանենք «հայկական*

երազանք»[6]: ՀՀՇն ներկայացնող պատգամաւորների մի մասը Տէր Պետրոսեանի ղեկավարութեամբ, դէմ էր Հռչակագրում Ցեղասպանութեան հարցը որեւէ կերպ արծարծելուն[7]: Շատերը կարծում էին, որ այդ խնդիրը պէտք չէ արտացոլուի Հռչակագրում, զգուշանալով հարեւան ցեղասպան պետութիւնից՝ Թուրքիայից: Բանախօսներից մէկը պատկերաւոր ներկայացնելով զգուշաւորութեան կողմակիցներին, նշում էր, որ նրանք վախեցնում են թուրքերով, «որ թուրքերը մեզ կ'ուտեն...»[8]: Պատգամաւորների մեծամասնութեան ճնշմամբ վերջնական տարբերակում ընդգրկուեց նաեւ Ցեղասպանութեան յիշատակումը: Այդ բանավէճն յետագայում էլ ԳԽում տարբեր օրինագծերի քննարկման ժամանակ ծագում էր: 2 հիմնական մօտեցում կար.

Առաջին մօտեցման կողմակիցները գտնում էին, որ ՀՀն պէտք է մի կողմ թողնի «անցեալի պատմական բեռը» եւ գնայ առաջ: Դառնայ անկախ պետութիւն, հզօրանայ: Ազգային գաղափարախօսութիւնը պէտք է իր տեղը զիջի պետական գաղափարախօսութեանը: Միայն այդ դէպքում կարող է ՀՀն որպէս պետութիւն յաջողել: Նպատակը պէտք է լինի ժողովրդավարութեան զարգացումը: Այդ գաղափարի հետեւողական առաջ մղողը Տէր Պետրոսեանն էր, ով բազմիցս իր ելոյթներում նշում էր, որ «ազգային գաղափարախօսութիւն» հասկացութիւնը «*կեղծ քաղաքական կատեգորիա է, որովհետեւ ժողովրդավարութեան պայմաններում ...անհնար է ողջ ազգին համախմբել մէկ միասնական գաղափարախօսութեան շուրջ*[9]:

Երկրորդ մօտեցման կողմակիցների կարծիքով հայ ժողովուրդն ունէր իր առանձնայատկութիւնները եւ պետականաշինութիւնը պէտք է ընթանար դրանց հաշուառմամբ: Գտնում էին, որ չի կարելի առաջ գնալ առանց ազգային կուտակուած խնդիրները լուծելու, չի կարելի հաշուի չնստել այն փաստի հետ, որ պատմական այդ հիմնախնդիրների հետեւանքով գոյութիւն ունի հայկական սփիւռք, որը նոյնպէս պէտք է մասնակցի պետականաշինութեանը: Գաղափարի առաջ մղողը Վազգէն Մանուկեանն էր, որ 1990ից առաջ էր քաշել հայերի «համաշխարհային ազգ» լինելու գաղափարը: Նա դա համարում էր ազգային ռոմանտիզմ, որը գնահատում էր որպէս դրական երեւոյթ, ի տարբերութիւն քաղաքական ռոմանտիզմի, որը կարող է կործանարար լինել: Ըստ նրա «*Ազգային ռոմանտիզմի հիմնա-*

---

[6] Վազգէն Մանուկեան, *Հայկական երազանքը գոյատեւման փակուղում: Ելոյթների եւ յօդուածների ժողովածու*, «Վ. Ի. Վ. այսօր եւ վաղը» հրատ., Երեւան, 2002, էջ 165: https://vazgenmanukyan.am/wp-content/uploads/2021/12/Armenian-Dream-in-the-Deadlock-of-Survival.pdf

[7] Մինասեան, էջ 115:

[8] Մասնաւորապէս այդ միտքը հնչեցրեց Ռաֆայէլ Համբարձումեանը, ով «Ազգային միասնութեան ուխտի» ղեկավարն էր (լուծարուել է 2013ին): ՀԱԱ, Ֆ.207, ց.62, գ.54, էջ 34:

[9] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.365, էջ 217:

կան աղբիւրներն են փուեալ ժողովրդի պատմութիւնը, մշակոյթը, ներկայ պահի յաջողութիւնները կամ զրկանքները: Քարոզիչներն են գրողները, արուեստագէտները, պատմաբանները, քաղաքական, զինուորական գործիչները: Ազգային ռոմանտիզմի հիմքի վրայ են առաջանում այս կամ այն ազգային գաղափարախօսութիւնները, դրա վրայ է հիմնուած հայրենասիրութիւնը, դա է հիմնականում թելադրում ազգային նպատակները»[10]:

Քննարկւում էին նաեւ ստեղծուելիք պետութեան կառուցուածքին վերաբերուող որոշ հարցեր, օրինակ՝ զինուած ուժերը պէտք է ենթարկուեն ԳԽ՞ն թէ՞ կառավարութեանը, ինչպիսի՞ն պէտք է լինի ժողովրդական պատգամաւորների տեղական խորհուրդների նկատմամբ վերաբերմունքը եւն.: Հասկանալու համար այդ քննարկումների էութիւնը, արժէ մի փոքր կանգ առնել ստեղծուած իրավիճակի նկարագրութեան վրայ:

Այդ ժամանակ Հայաստանը դեռեւս ԽՍՀՄ 15 հանրապետութիւններից մէկն էր, բայց առաջին անգամ Խորհրդային Հայաստանի խորհրդարանը ձեւաւորուել էր ոչ թէ «վերեւից» իշխող կոմունիստական վերնախաւի թելադրանքով, այլ, արցախեան շարժման շնորհիւ անցկացուած առաջին ազատ ընտրութիւնների միջոցով՝ «ներքեւից»: Կոմունիստներին ընդդիմադիր խորհրդարանականների մի մասը վերածնուող ազգային գաղափարախօսութեան կրողն էր, միւս մասը՝ ազատական: Առայժմս դրանք միաւորուած էին կոմունիստների դէմ եւ հանդէս էին գալիս միասնական ճակատով: ԳԽն ընկալւում էր որպէս դրական փոփոխութիւնների ապահովող, նոր քաղաքական ուժերի կայացման թատերաբեմ, ազգային իղձերի արտայայտիչ: Իշխանութեան միւս թեւերը՝ գործադիրն ու դատականը, որոնք ձեւաւորուած էին խորհրդային իշխանութիւնների կողմից, անբարեյոյս էին համարւում: Այդ պատճառով ԳԽն համարւում էր բարձրագոյն իշխանութիւն եւ փորձում էր ամէն ինչ պահել իր հսկողութեան տակ, այդ թւում նաեւ՝ զինուած ուժերը:

Քննարկման ընթացքում ընթանում էր նաեւ պետականութեան վերաբերեալ գիտելիքների լրացման գործընթաց: Աւելի տեղեկացուած պատգամաւորները «լուսաւորում էին» միւսներին, բացատրում ի՞նչ բաղադրիչներ է ներառում պետութիւն հասկացութիւնը, ի՞նչ պէտք է հասկանալ պետութեան տարածք ասելով եւն.[11]:

Բանավէճ ծաւալուեց պետութեան անուանման շուրջ՝ Հայաստանի Հանրապետութի՞ն թէ՞ ինչպէս խորհրդային տարիներին էր կոչւում՝ Հայկական հանրապետութիւն: Պատգամաւորներից ոմանք կարծում էին, որ առաջինի դէպքում *ֆիքսւում* է տարածքը եւ Հայաստանը սահմանափակւում է 29,000 քառ. կմ.ում[12], երկրորդի դէպքում արտայայտւում է այն միտքը, որ

---

[10] Մանուկեան, էջ 165:
[11] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.2, էջ 6:
[12] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.2, էջ 9:

այն հայ էթնոսի պետութիւնն է: Հռչակագրի տարբերակներում գրուած էր, որ ՀՀ տարածքը կազմելու է ՀԽՍՀն եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը: Պատգամաւորներից ոմանք կարծում էին, որ պէտք չի որոշակի նշել, քանի որ համոզուած էին, որ պետութեան տարածքը կարող է մեծանալ: Առաջարկ կար կոչել Արեւելեան Հայաստանի Հանրապետութիւն, ինչը, ըստ այդ անուանման կողմնակիցների, կը նպաստէր, որ իրաւապէս (*de facto*) ճանաչուէր Արեւմտեան Հայաստանի գոյութիւնը: Եւ եթէ կոչուէր Արեւելեան Հայաստան, պէտք էր յիշել, որ դրա մէջ մտնում էին նաեւ Լեռնային Ղարաբաղը, Նախիջեւանը եւ Ղարսի մարզը[13]:

Քննարկումն իրականացւում էր խիստ յուզական մթնոլորտում, ինչն աւելի խտացաւ, երբ խորհրդարանում ընթերցուեց ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Առաջինի, նամակը, որով իր օրհնութիւնն ու աղօթքն էր յղում «վերածնուող մեր հայրենի հարազատ պետութեանը»[14]: Աթէիստական խորհրդային հանրապետութեան պայմաններում դա տեղի էր ունենում առաջին անգամ:

Հռչակագրի բոլոր կէտերը առանձին քուէարկուեցին եւ այն ընդունուեց 1990 Օգոստոսի 23ին, որոշ յօդուածների շտկումներից յետոյ Օգոստոսի 24ին ներկայացուեց վերջնական տարբերակը, որին կողմ քուէարկեց 194 պատգամաւոր (դէմ չկար, 2 հոգի ձեռնպահ էր)[15]:

Հայաստանի անկախութեան մասին Հռչակագրում[16] անկախութիւնը կապուեց ոչ միայն մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագրի, միջազգային իրաւունքի հանրաճանաչ նորմերի, ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքի, այլեւ համայն հայութեան իղձերի իրականացման եւ պատմական արդարութեան վերականգնման հետ: Նախաբանում ընդգծուեց, որ այն հիմնւում է 1989 Դեկտեմբերի 1ի «Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին» Հայկական ԽՍՀ ԳԽ եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշման վրայ: Այն հռչակւում էր 1918 Մայիսի 28ին ստեղծուած ՀՀ ժողովրդավարական աւանդոյթները շարունակելու համար[17]: Դրա հետ մէկտեղ խնդիր էր դրւում ստեղծել ժողովրդավարական, իրաւական հասարակարգ:

---

[13] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.2էջ 10:

[14] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.54, էջ 104:

[15] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.65, էջ 30:

[16] Հռչակագրի ամբողջական բնագիրը տես՝ http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2602&lang=arm :

[17] ԽՍՀՄ փլուզման հետ մէկտեղ ազգային գաղափարախօսութիւնը բարձրացաւ բոլոր նախկին հանրապետութիւններում. դա 70 տարուայ ազգամիջեան խնդիրները անտեսելու, դրանք ամբողջատիրական բազմազգ պետութեան վարչահրամայական մեթոդներով կասեցնելու արդիւնքն էր: Միգուցէ հայերն առաջիններից էին ԽՍՀՄում, որ դրանք բարձրացրեցին, բայց դա չի նշանակում, որ եթէ հայերը դա չանէին, միւս ազգերը չէին բարձրացնելու իրենց յուզող խնդիրները:

Հռչակագիրը դարձաւ ոչ միայն անկախացման գործընթացը ազդարարող փաստաթուղթ, այլ նաեւ հայեցակարգային ծրագիր, որով յետագայում չափուելու եւ գնահատուելու էր ամէն ինչ:

Հռչակագրի ընդունումից յետոյ սկսուեց պետութեան կառուցաւորումը: Պառլամենտն անուանուեց Գերագոյն խորհուրդ (ԳԽ), կառավարութիւնը՝ մինիստրների խորհուրդը՝ նախարարների խորհուրդ: ԳԽն երկրի բարձրագոյն օրէնսդիր մարմինն էր: Ընդունուեցին պետութեան խորհրդանիշերը: Միանգամից խոշորագոյն փոփոխութիւնների գնալը շատ դժուար էր, այդ պատճառով Խորհրդային Հայաստանի պետական կառավարման կառուցուածքը ձեւի առումով առժամանակ պահպանուեց:

ԱՆԿԱԽԱՑՈՂ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ

Անկախութեան հռչակագրի քննարկման ընթացքում եւ ընդունումից յետոյ ԳԽի օրակարգը հարստացուեց պետականաշինութեան բազմաթիւ հարցերով: Քննարկուեցին մի շարք օրինագծեր՝ իրաւապահ մարմինների եւ զինուած ուժերի ապաքաղաքականացման, ՀՀ պետական սեփականութեան, ՀՀ ժողովրդական վերահսկողութեան կոմիտէն վերացնելու, սահմանադրական յանձնաժողով կազմելու մասին եւն.:

Հետեւողական աշխատանք էր տարւում ԳԽ աշխատանքը կատարելագործելու ուղղութեամբ: Քննարկուեցին ԳԽ կանոնադրութիւնը, ԳԽ մշտական յանձնաժողովների կանոնադրութիւնը, ԳԽ մշտական եւ յատուկ յանձնաժողովների համալրման մասին նախագծերը: Սկսուեց անկախացող հանրապետութեան տօնացանկի հաստատման գործընթացը[18]:

Պետականաշինութեան առաջին փուլում հակասութիւններ ծագեցին խորհրդարանի եւ կառավարութեան միջեւ. ԳԽի ղեկավարութիւնը չէր վստահում խորհրդային իշխանութեան պայմաններում ձեւաւորուած կառավարութեանը: 1990 Օգոստոսի 13ին այդ կազմը վարչապետ Վլադիմիր Մարգարեանցի գլխաւորութեամբ վայր դրեց իր լիազօրութիւնները եւ վարչապետ նշանակուեց Վազգէն Մանուկեանը, ով Ղարաբաղ կոմիտէի համահիմնադիրն էր, ՀՀՇ առաջին ծրագրի հեղինակը: Մանուկեանը դարձաւ Խորհրդային Հայաստանի վերջին եւ ՀՀ առաջին վարչապետը: Դրանից յետոյ օրէնսդիր եւ գործադիր մարմինների յարաբերութիւնները ժամանակաւորապէս կարգաւորուեցին:

1990 Սեպտեմբերի 18ին ԳԽն որոշում ընդունեց ՀՀ կառավարութեան կառուցուածքի վերաբերեալ, որի համաձայն կազմուեցին աշխատանքի եւ

---

[18] Մինչեւ տօնացանկի հաստատումը ՀՀ ԳԽ 1990 Հոկտեմբերի 30ի նիստին ժամանակաւորապէս որոշուեց չնշել Նոյեմբերի 7ը՝ Հոկտեմբերեան յեղափոխութեան յաղթանակի օրը, որպէս տօն եւ շքերթ չկազմակերպել: Սկսուել էր խորհրդային խորհրդանիշերի տապալման գործընթացը:

ընկերային ապահովութեան, առողջապահութեան, արդարադատութեան առեւտրի, փոխադրութեան, արտաքին գործերի, արտաքին տնտեսական կապերի, գիւղատնտեսութեան, թեթեւ արդիւնաբերութեան, հաղորդակցութեան, կրթութեան, հացամթերքների, մշակոյթի, ներքին գործերի, շինարարութեան, սննդի արդիւնաբերութեան, ֆինանսների նախարարութիւնները[19]: Նախարարութիւնների այդպիսի ծաւալուն կազմը արտացոլում էր Խորհրդային Հայաստանի կարիքները, որը ԽՍՀՄ կազմում էր: Անկախ հանրապետութեան համար դրանց թիւը բաւական շատ էր, բայց միանգամից փոփոխութիւնների գնալը դժուար էր, այդ պատճառով այն պահպանուեց: Այդ ցանկում չկար պաշտպանութեան նախարարութիւնը, որը հայ-ադրբեջանական հակամարտութեան օրէցօր սրուող պայմաններում խիստ անհրաժեշտութիւն էր: Բայց քանի դեռ Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր, նորընտիր ղեկավարութիւնը խուսափում էր ռազմապաշտպանական ոլորտում կտրուկ քայլերից: Աւելի վճռական քայլերի կողմնակից վարչապետ Մանուկեանը 1990 Օգոստոսի 21ին ստորագրեց թիւ 411 հրամանագիրը՝ «ՀԽՍՀ ներքին գործերի նախարարութեանն առընթեր յատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին»: Ստորաբաժանումը ձեւաւորուելու էր կամաւորութեան սկզբունքով:

Թէպէտ ՀՀ իշխանութիւները նախընտրում էին զգուշաւոր քաղաքականութիւն վարել ԽՍՀՄից անկախանալու ճանապարհին, սակայն երբեմն յարաբերութիւնների սրումից խուսափել չէր յաջողւում: Այսպէս, ՀՀ ԳԽում 1990 Նոյեմբերի 13ին Վանօ Սիրադեղեանը[20] իր ելոյթում ընդգծեց, որ Հայաստանում գոյութիւն ունի 2 կազմակերպութիւն, որոնք ղեկավարւում են դրսից՝ ՀԿԿ կենտկոմը եւ ՊԱԿը (պետական անվտանգութեան կոմիտէ), «*որը ոչ մի անունով չի ենթարկւում այսօր Հայաստանի պառլամենտին, կառավարութեանը, Հայաստանին առհասարակ, եւ յայտնի չէ այդ կազմակերպութեան ... ընդերքներում ինչ է կատարւում, ու՞մ համար են աշխատում այդ կազմակերպութիւնները եւ ու՞մ դէմ են աշխատում*»[21]: Կրքերի բորբոքման պատճառը Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան համագումարն էր, որտեղ քննադատուել էր անկախացման գործընթացը: Այդ ելոյթից յետոյ ստեղծուեց ՊԱԿի գործունէութիւնը ուսումնասիրող յանձնաժողով (նախագահ՝ Աշոտ Մանուչարեան):

Պետականաշինութեան համար լուրջ սպառնալիք էր երկրի ներքին անդորրի խախտումը: Օգտուելով խորհրդային իշխանութեան թուլացումից եւ նոր իշխանութիւնների անփորձութիւնից աշխուժացել էին քրէական տար-

---

[19] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.17, էջ 59-60:

[20] Այդ ժամանակ Սիրադեղեանը ՀՀ ԳԽ պատգամաւոր էր, ՀՀՇ անդամ, յետոյ՝ նախագահ, յետագայում եղել է ՀՀ ներքին գործերի նախարար, Երեւանի քաղաքապետ:

[21] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.89, էջ 92:

ները: Քաղաքների փողոցները հանգիստ չէին, քաղաքացիների համար անվտանգութեան խնդիր կար եւ անհրաժեշտ էր շատ արագ կարգ ու կանոն հաստատել: Յարձակումներ էին տեղի ունենում խորհրդային բանակի զօրամասերի վրայ, ինչը մեծ ռիսկեր էր պարունակում, քանի որ կարող էր առիթ հանդիսանալ Մոսկուայի համար Հայաստան զօրք մտցնելու եւ անկախութեան գործընթացները կասեցնելու համար: 1990 Յունուարից մինչեւ Սեպտեմբեր տեղի էր ունեցել 151 յարձակում՝ զէնքի բռնագրաւմամբ, որի ընթացքում 99 մարդ վիրաւորուել էր, 19ը սպանուել[22]: 1990 Օգոստոսի 29ին ՀՀ ԳԽ որոշմամբ ՀՀ ողջ տարածքում արտակարգ դրութիւն մտցուեց[23]: Որոշումը թէպէտ եւ ցաւոտ էր, քանի որ որոշ չափով տուժեցին որոշ ֆիդայական ջոկատներ[24], սակայն պետականաշինութեան այդ փուլում անխուսափելի էր: Վարչապետի հրամանագրի 1990 Հոկտեմբերի 18ի որոշմամբ նոյնիսկ թոյլատրուեց զէնք կրել ԳԽ նախագահութեան անդամներին, խորհրդարանի պաշտպանութեան եւ ներքին գործերի հարցերի յանձնաժողովի անդամներին[25]:

Ընթացաւ նաեւ «պետական բառապաշարի» եւ տեղանունների «հայացման» գործընթաց: 1990 Նոյեմբերի 5ին կառավարութեան որոշմամբ ՀՀ սահմանադրութեան եւ միւս օրէնսդրական ակտերի հայերէն գրոյթներում «մինիստր», «մինիստրութիւն», «Մինիստրների խորհուրդ» բառերն ու բառակապակցութիւնները փոխարինուեցին «նախարար», «նախարարութիւն», «Նախարարների խորհուրդ» բառերով ու բառակապակցութիւններով[26]: «Ժողովրդական դեպուտատ» արտայայտութիւնը փոխարինուեց «պատգամաւոր» բառով:

Թէպէտ օրէնսդիր իշխանութեան մէջ թափ էր ստեղծում ՀՀՇն, սակայն կոմունիստները որոշ տեղերում դեռ պահում էին իրենց ազդեցութիւնը եւ դա մտահոգում էր նոր իշանութիւններին: 1990 Նոյեմբերի 5ին ԳԽն որոշեց ՀՀ պետական մարմինները եւ պետական ձեռնարկութիւնները, հիմնարկները, կազմակերպութիւնները, ուսումնական հաստատութիւնները եւ զինուորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնել, դադարեցուեց այդ մարմիններում կուսակցական եւ հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների գործունէութիւնը[27]:

---

[22] ՀԱԱ, ֆ.207, ց.62,գ. 90, էջ 127:

[23] ՀԱԱ, ֆ.207, ց.62,գ. 15, էջ 321:

[24] Մինչ այդ հայրենիքի պաշտպանութեան համար ստեղծուած ֆիդայական ջոկատներին կոչ էր արուել մտնել ՀՀ ԳԽ ենթակայութեան տակ, սակայն ոմանք (օրինակ, ՀԱԲը՝ Հայոց ազգային բանակ կազմաւորումը) չենթարկուեցին, փորձեցին հակառակուել, ինչը դրանց վերացման պատճառ դարձաւ:

[25] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.1, էջ 42:

[26] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.19, էջ 78:

[27] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.19, էջ 79:

Պետականաշինութեան համար կարեւոր էր նոր քաղաքական համակարգի փոխակերպումը բազմակուսակցականի, իսկ ժողովրդավարութեան համար՝ քաղաքացիական հասարակութեան ձեւաւորումը: 1990 Դեկտեմբերի 12ին քննարկուեց «Կուսակցութիւնների, հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների մասին» ՀՀ օրէնքի նախագիծը[28]: Կուսակցութիւնների եւ հասարակական կազմակերպութիւնների թիւը շատ արագ սկսեց աճել: ԳԽում առաջարկութիւն եղաւ մինչեւ իրավիճակի կայունացումը արգելել կուսակցութիւնների գործունէութիւնը, սակայն ԳԽն չընդունեց դա: ԳԽի ներսում ընթանում էր կուսակցական խմբակների եւ պատգամաւորական խմբերի ձեւաւորում:

ԳԽն 1990 Նոյեմբերի 5ին, «Հայաստանի անկախութեան մասին» հռչակագրին համապատասխան, որոշուեց ՀՀ նոր սահմանադրութեան մշակման համար ստեղծել սահմանադրական յանձնաժողով, որի նախագահը դարձաւ ԳԽ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը[29]: Այդ պաշտօնում առաջադրուել էին նաեւ «անկախականներ» Պարոյր Հայրիկեանը եւ Աշոտ Նաւասարդեանը[30]: ԱԻՄի ծրագրային փաստաթղթերում վաղուց դրուած էր սահմանադիր ժողովի պահանջը: Այդ է պատճառը, որ անկախացման տարիներին ԱԻՄը անընդհատ եւ ապարդիւն փորձում էր այդ գաղափարը արմատաւորել հասարակական գիտակցութեան մէջ: Հայրիկեանը, գտնում էր, որ սահմանադրութեան ընդունումը խիստ անհրաժեշտ է, բայց ոչ պատգամաւորների կազմով, աւելացնելով՝ «*...այդ Սահմանադրութիւնը մենք չպէտք է հաստատենք, այլ պէտք է յատուկ մարմին, որը պէտք է հնարաւորինս անկախ լինի ամէն տեսակի ճնշումներից*»[31]: Նաւասարդեանը կարեւորագոյն խնդիր էր համարում քաղաքական անկախութեան ապահովումը: Եւ դա պէտք է արտայայտուէր բանակի ստեղծմամբ: «*Մենք պէտք է ունենանք բանակ առաջին իսկ օրերին, ոչ թէ ներքին գործերին կից...: Պէտք է ազգայնացուի պետական անվտանգութեան կոմիտէն, կազմալուծուի, նորը ստեղծուի: Ներքին գործերի նախարարութիւնը պէտք է ազգայնացուի*»[32]: Իշխող ուժի՝ ՀՀՇի, ղեկավարները աւելի զգուշ քաղաքականութեան կողմնակից էին եւ դէմ էին այդպիսի շտապողականութեանը:

Սահմանադրական յանձնաժողովի կազմում ընդգրկուել էին պատգամաւորներ, իրաւագիտութեան ոլորտի ճանաչուած մասնագէտներ, յայտնի մտաւորականներ: Պետական շինարարութեան հարցեր քննարկուեցին

---

[28] ՀԱԱ, ֆ. 207, ց.62, գ.20, էջ 128:

[29] ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ.19, էջեր 80-82:

[30] Երկուսն էլ Խորհրդային տարիներին գործող ընդյատակեայ Ազգային միացեալ կուսակցութեան անդամներ էին, խորհրդային այլախոհներ, երկար տարիներ իրենց հայեացքների համար անցկացրած խորհրդային աքսորավայրերում:

[31] ՀԱԱ, ֆ. 207, ց.62, գ. 96, էջ 13:

[32] Նոյն, էջ 20:

նաեւ ԳԽ 1990 Դեկտեմբերի 4ի նիստում՝ անկախ պետականութեան յանձնաժողովը ստեղծելիս:

ԳԽ 1990 Դեկտեմբերի 10ի որոշման համաձայն «*Մինչեւ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան ընդունումը դադարեցուեց գործող սահմանադրութեան այն դրոյթների գործողութիւնը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախութեան մասին» հռչակագրի հիման վրայ Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն խորհրդի կողմից ընդունուած օրէնքներին*»[33]: Այսինքն, եթէ նշելու լինենք փաստաթղթերի աստիճանակարգը, ապա ամենավերեւում Անկախութեան հռչակագիրն էր, յետոյ դրա հիմամբ ընդունուած օրէնքները, յետոյ նոր սահմանադրութիւնը, ինչը, իհարկէ, հակասում էր սահմանդրութեան, որպէս պետութեան հիմնական օրէնքի, տրամաբանութեանը:

Հետեւելով ժողովրդավարական պետութեան սկզբունքներին մեծ ուշադրութիւն էր յատկացուում հաշուետուութեան գործիքակազմի ներդրմանը եւ ԳԽն ներկայացուցչական ժողովրդավարութեան օրինակ էր: ԳԽ մշտական յանձնաժողովների նախագահները պարտադիր հաշուետուութիւններ էին ներկայացնում յանձնաժողովների կողմից կատարուած աշխատանքների մասին: Հաշուետուութիւնները լուրջ քննարկւում եւ գնահատւում էին ԳԽ նիստերում:

Եթէ ԳԽ առաջին նստաշրջանում պետականաշինութեան համար ամենակարեւորն Անկախութեան հռչակագիրն էր, ապա երկրորդում՝ անկախութեան հանրաքուէի նախապատրաստելը: Կարեւորւում էր քրէական եւ քաղաքացիական օրէնսդրութեան արմատական վերամշակումը, փոփոխութիւններ ոստիկանութեան, դատախազութեան եւ դատական համակարգում՝ այսինքն 3րդ իշխանութեան բարեփոխումը: Քաղաքական նպատակների իրականացման համար լուրջ հիմք պէտք է հանդիսանային սպասուելիք տնտեսական ձեռքբերումները: 1991 Յունուարի 29ին ընդունուեց «Գիւղացիական եւ գիւղացիական կոլեկտիւ տնտեսութիւնների մասին» ՀՀ օրէնքը, նորացուեց ՀՀ հողային օրէնսգիրքը, որոնցով սկիզբ դրուեց հողի սեփականաշնորհման գործընթացին:

Հողի սեփականաշնորհման գործընթացը սկսուել էր, սակայն գիւղխորհրդների որոշ նախագահներ խոչընդոտում էին (ինչպէս յետոյ պարզուեց՝ ոչ միշտ անհիմնաւոր), այդ էր պատճառը, որ կարեւորւում էր նաեւ տեղական խորհուրդների համակարգի բարեփոխումը: Սեփականաշնորհման գործընթացում շտապողականութիւնը յետագայում բացասական հետեւանքներ ունեցաւ[34]: Այդ ժամանակ յետխորհրդային երկրներին Արեւմուտ-

---

[33] ՀԱԱ , ֆ.207, ց.62, գ.20, էջ 144:

[34] Օրինակ՝ փոշիացուեց հանրապետութեան արդիւնաբերական ներուժը, շատ ձեռնարկութիւններ սեփականաշնորհումից յետոյ փակուեցին, իսկ դրանց գոյքը վա-

քի կողմից առաջարկուել էր «Վաշինգտոնեան կոնսենսուս» տնտեսութեան ազատականացման ծրագիրը, որը համարւում էր համաշխարհային եւ հաշուի չէր առնում պետութիւնների զարգացման տարբեր մակարդակները: Մանուկեանը, լինելով արագ սեփականաշնորհման կողմնակից, այնուամենայնիւ նշում էր, որ «*տնտեսութեան ազատականացման այն մոդէլը, որ առաջարկում են մեզ Արեւմուտքի որոշ շրջանակներ, հնարաւոր է բարի մտադրութիւններով, հաշուի չեն առնում ոչ տեխնիկապէս զարգացած ձեռնարկութիւնների գոյութեան փաստը երկրում, ոչ բարձր որակաւորում ունեցող հարիւր հազարաւոր մասնագէտներին, ոչ մեր ժողովրդի մտածելակերպը, ոչ էլ նրա բնական յաւակնութիւնները: Այդ նախագծերի իրականացումը կը յանգեցնի նրան, որ Հայաստանում 1,5 մլն մարդ կը մնայ, որոնք* հիմնականում կը զբաղուեն մանր առեւտրով, արհեստներով, լոլիկ աճեցնելով ու կօշիկ կարելով»[35]: Իրականում յետագայում հենց այդպէս էլ եղաւ: Փոշիացուեց հզօր արդիւնաբերական ներուժը, ինչը բանուորա-ճարտարագիտական աշխատուժի գաղթի պատճառ հանդիսացաւ:

1991 Փետրուարի 26ին ընդունուեց ՀՀ օրէնքը «Հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների մասին», իսկ Ապրիլի 2ին այդ օրէնքի կիրարկման կարգը, ինչի կապակցութեամբ ԳԽ փոխնախագահ Բաբկէն Արարքցեանը շնորհաւորեց բոլորին նշելով, որ «*...փաստօրէն առաջին անգամ, մեր հանրապետութիւնում, յամենայն դէպս վերջին 70 տարուայ ընթացքում ստեղծուեց բազմակուսակցական համակարգ*»[36]: Այդ օրէնքի ընդունումից յետոյ ՀՀ արդարադատութեան նախարարութիւնը գրանցեց 20 քաղաքական կուսակցութիւն, որոնց թւում էին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը (ՀՅԴ), Հայաստանի Հանրապետական Կուսակցութիւնը (ՀՀԿ), Հայոց Համազգային Շարժում Կուսակցութիւնը (ՀՀՇ), Ազգային Ինքնորոշում Միաւորումը (ԱԻՄ), Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը (ՀԿԿ), Սահմանադրական Իրաւունք Միութիւնը (ՍԻՄ) եւն.: 1995ին արդէն գրանցուել էր 49 կուսակցութիւն: Յետագայում դրանց թիւը շարունակեց աճել[37]:

ճառուեց: Դա նաեւ ահռելի գործազրկութեան եւ որակեալ կադրերի հանրապետութիւնից արտահոսքի պատճառ հանդիսացաւ:

[35] Մանուկեան, էջ 169:

[36] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.99, էջ 15:

[37] Կուսակցութիւնները դիտւում էին, որպէս իշխանութեան հասնելու օրինական միջոց, ընկերային այս կամ այն խաւի պահանջների ձեւակերպող ու արտայայտող, իսկ ընդդիմադիր կուսակցութիւնները՝ նաեւ իշխանութեան վերահսկողութեան գործիքակազմ եւ քաղաքական այլընտրանքի առաջադրող: 1990ականների առաջին կէսին առաւել մեծ ազդեցութիւն ունէին ազատական եւ ազգային գաղափարախօսութեամբ կուսակցութիւնները, կոմունիստների եւ պահպանողականների ազդեցութիւնը այդ շրջանում թոյլ էր:

ԽՍՀՄ 9 հանրապետութիւններում 1991 Մարտի 17ին անցկացուած հանրաքուէում դրանց բնակչութեան մեծ մասը քուէարկել էր միութենական պետութիւնը պահպանելու օգտին: Ռուսաստանի դեմոկրատական շարժումը ժամանակաւորապէս անկում էր ապրում: Այդ պայմաններում աշխուժացել էին յետադիմական ուժերը: Ապրիլին խորհրդաադբեջանական ուժերը յարձակուեցին Գետաշէնի, Շահումեանի, Արցախի վրայ, տեղահանելով հայ բնակչութեանը: Բանակի ստեղծումը լուրջ օրակարգային խնդիր էր դարձել:

Հայաստանում անկախութեան հանրաքուէն անցկացուեց 1991 Սեպտեմբերի 21ին եւ ընտրողների աւելի քան 94%ը քուէարկեց անկախութեան օգտին[38]: 1991 Դեկտեմբերին ԽՍՀՄ դադարումով վերացուեց բռնի ուժով Հայաստանին միութենական պայմանագիրը ստորագրելու հարկադրանքի վտանգը: Նոյն տարուան Սեպտեմբերի 2ին Ստեփանակերտում Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային եւ տեղական խորհուրդների պատգամաւորների մասնակցութեամբ համատեղ նստաշրջանը հռչակեց հայկական երկրորդ հանրապետութեան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ծնունդը:

1990-92՝ ընդունուեցին ՀՀ պետական խորհրդանիշերը: 1990 Օգոստոսի 24ին որպէս պետական դրօշ հաստատուեց Եռագոյնը՝ 1918ի Հայաստանի առաջին հանրապետութեան դրօշը: Եռագոյնն արդէն հարազատացել էր 1988-90՝ ցոյցերի շնորհիւ եւ դրա ընդունումը խնդիր չառաջացրեց: Այն բարձրացուեց ԳԽ շէնքի եւ կառավարական տան վրայ Օգոստոսի 25ին: Ընդ որում դա արուեց Հայաստանի առաջին հանրապետութեան օրհներգի՝ «Մեր հայրենիք»ի, հնչիւնների տակ, որը դեռեւս չէր հաստատուել որպէս Երրորդ հանրապետութեան օրհներգ: Դա տեղի ունեցաւ 1991 Յուլիսի 1ին[39]: Բայց զինանշանի շուրջ ԳԽում լուրջ բանավէճ ծաւալուեց: Զինանշանի ընտրութեան մրցոյթում ներկայացուած բոլոր տարբերակներում պատկերուած էին Մասիսն ու Սիսը, որոնք հայ ժողովրդի համար սոսկ լեռներ չեն, այլ պատմական յիշողութեան խտացուած մարմնաւորում, ազգային ինքնութեան կարեւոր խորհրդանիշեր: Պատահական չէ, որ դրանք պատկերուած էին նոյնիսկ Խորհրդային Հայաստանի զինանշանին: Բացի դրանից տեղեկատուութիւն էին պարունակում հայկական արքայատոհմերի կամ խորհդանշանների վերաբերեալ:

Թէժ անցաւ նաեւ դրամի անուան հետ կապուած քննարկումը: Շատ տարբերակներ էին առաջարկուել՝ դահեկան, ստակ, պոլիկ, մանրադրամ,

---

[38] Հանրաքուէի նախապատրաստման եւ անցկացման մասին աւելի մանրամասն տես՝ «Անկախութեան օրակարգի ձեւաւորումը Անկախութեան հրապարակում եւ Գերագոյն խորհրդում» յօդուածում (*Հայկազեան հայագիտական հանդէս*, 43/2:2023 https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haigazean/43(2).pdf):

[39] Աւելի մանրամասն այդ մասին տես՝ Մինասեան, էջ 136:

ի բար, ի մի եւն.: Տիգրան Սարգսեանը, տնտեսական հարցերով յանձնաժողովի անունից, առաջարկեց անուանել դրամ եւ լումայ[40]: Դարձեալ երկար քննարկումներից յետոյ դա հաստատուեց 1992ին:

Պետական խորհրդանիշերի հարցը ամբողջացաւ 1994 Փետրուարին, երբ Աշոտ Նաւասարդեանի կողմից մտցուեց օրակարգ որպէս հրատապ հարց: Բանակը, ներքին ուժերը, օդանաւային ընկերութիւնը չունէին խորհրդանիշեր, նոյնիսկ երբեմն օգտագործում էին խորհրդային խորհրդանիշերը: ԳԽն «Ազգային խորհրդանիշերի եւ տարբերանշանների համալիր համակարգի ստեղծման մասին» որոշում ընդունեց[41]: Դրանում ասւում էր, որ ելնելով ՀՀ անկախութեան հռչակման մասին ՀՀ ԳԽ 1991 Սեպտեմբերի 23ի որոշումից՝ զինուած ուժերում, ռազմականացուած մարմիններում եւ պետական այլ կառոյցներում ազգային խորհրդանիշերի եւ տարբերանշանների համալիր համակարգ ստեղծելու նպատակով, ՀՀ ԳԽ նախագահութեանը յանձնարարուեց ստեղծել ԳԽի պատգամաւորներից, կառավարութեան համապատասխան մարմինների ու գերատեսչութիւնների ներկայացուցիչներից, զինուորականներից եւ այլ մասնագէտներից 20 հոգուց կազմուած ժամանակաւոր յանձնաժողով, որը պէտք է մրցութային կարգով հաստատուած համալիր տարբերակները ներկայացնէր ԳԽի հաստատմանը:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՁԵՒԱՒՈՐՄԱՆԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՈՂ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԳԽՈՒՄ

Պետականաշինութեան կարեւորագոյն խնդիրը ազգային բանակի կազմաւորումն էր: Արտաքին վերահաս վտանգի հետ մէկտեղ, ինչպէս վերը նշուեց, հանրապետութեան տարածքում տարերայնօրէն սկսեցին ձեւաւորուել զինուած խմբեր: 1990ի ամռանը Գորիսում, Սիւնիքի ջոկատները ժողովրդական ինքնապաշտպանութեան խորհուրդ ստեղծեցին: Արդէն այդ ժամանակ էր կոչ արւում միաւորել այդ ջոկատները եւ դրանց հիմքի վրայ ստեղծել հայոց բանակ:

Խորհրդային բանակում ազգամիջեան բախումներ էին սկսուել եւ պարզ էր, որ հայ երիտասարդների համար այն անվտանգ չի: Հայաստանը ընդունել էր Անկախութեան հռչակագիրը, բայց դեռ ԽՍՀՄ կազմում էր, հետեւապէս հայ երիտասարդները զորակոչւում էին խորհրդային բանակ: Ինչպէս վերը նշուեց, վարչապետի 1990 Օգոստոսի 21ի հրամանագրով զինուած ջոկատները օրինականացնելու համար, մտցուեցին ներքին գործերի նախարարութեան կազմի մէջ:

---

[40] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.190, էջ 203:

[41] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.348, էջ 41:

Սեպտեմբերին սկսուեց Յատուկ գնդի ձեւաւորումը[42], որի մասին ԳԽում խօսեց Վազգէն Սարգսեանը[43]: Նա հաստատեց, որ դա շատ դժուար էր, որովհետեւ ոչ ոք այդ փորձը չունէր: Բնական էր, որ ֆիդայական ջոկատներում կռուող զինեալների մի մասը չէր ուզում մտնել յատուկ գունդ, բայց դա յաղթահարուեց: Յետոյ դիմումներ եղան յատուկ գնդում ներգրաւուելու համար, եւ դրանք այնքան շատ էին, որ ստիպուած եղան սահմանափակել մինչեւ 5000 հոգի, առաւել եւս, որ կարող էին ապահովել միայն 2500-3000 հոգու հանդերձանքը: Մանուկեանը ողջոյնի խօսքում ասաց. «*Այժմ մենք ունենք մեր հանրապետութիւնը: Այն դեռ լրիւ անկախ չէ: Բայց մենք քայլում ենք այդ ուղղութեամբ եւ կը հասնենք քաղաքական, տնտեսական անկախութեան: Մենք կ'ունենանք հզօր պետութիւն, հզօր բանակ, հզօր տնտեսութիւն եւ կը վերադարձնենք մեր նախնիների փայլը*»[44]: Յատուկ գնդի կազմում ընդգրկուեցին Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջեւանի, Մեղրու եւ այլ շրջանների 26 ինքնապաշտպանական վաշտերը[45]:

1990 Հոկտեմբերի 17ի ԳԽ որոշմամբ ՀՀում կասեցուեց «Ընդհանուր զինապարտութեան մասին» ԽՍՀՄ 1967 Հոկտեմբերի 12ի օրէնքի գործադրութիւնը[46]: Որոշուեց ՀՀ քաղաքացիների զօրակոչը կազմակերպել ՀՀ

---

[42] Յատուկ գնդի ստեղծումը ատենի վարչապետ Մանուկեանը այսպէս է նկարագրել իր գրքում՝ «*Հայաստանը դեռեւս ԽՍՀՄ կազմում էր, հանրապետութիւնում ձեւաւորուել էին անկառավարելի զինուած ջոկատներ, առկայ էին նաեւ ինքնապաշտպանութեան խնդիրներ, հանրապետութիւնը բանակի կարիք ունէր, ուստի ՀՀ վարչապետի 21.08.1990թ. թիւ 411 եւ 13.09.1990թ. թիւ 420 որոշումներով ստեղծուեց յատուկ գունդը, որը յետագայում հայոց բանակին հիմք ծառայեց: 1991թ. Մայիսի 4ի թիւ 325 որոշմամբ ստեղծուեց ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանութեան կոմիտէն*» (Մանուկեան, էջ 70. նաեւ՝ https://vazgenmanukyan.am/wp-content/uploads/2021/12/Armenian-Dream-in-the-Deadlock-of-Survival.pdf):

[43] Վազգէն Սարգսեանը գրող էր, հրապարակախօս, ՀՀՇ շարժման գործուն մասնակիցներից, ինչի շնորհիւ 1990ին ընտրուեց Հայաստանի խորհրդարանի պատգամաւոր: Նա եղել է ԳԽ պաշտպանութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի նախագահ, այնուհետեւ պաշտպանութեան նախարար նշանակուեց:

[44] https://www.civilnet.am/news/188695/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%AB-%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8-%D6%87-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-1918-2019/ :

[45] Մինասեան, էջ 142:

[46] ՀԱԱ, ֆ.207, ց. 62, գ.18, էջ 109:

տարածքում: ՀՀ տարածքից դուրս կարող էին մեկնել միայն այդպիսի ցանկութիւն ունեցող երիտասարդները:

ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովի 1990 Յուլիսի 25ի հրամանագրով անօրինական զինուորական խմբաւորումները պէտք է ցրուէին 15 օրում: Մտավախութիւն կար, որ կենտրոնական իշխանութիւնները կարող են միջամտել: Մոսկուայի հետ բանակցութիւնների շնորհիւ հրամանագրի գործողութեան ժամկէտը երկարաձգուեց 3 ամսով: Բանակցութիւնների արդիւնքում ՀՀ իշխանութիւնները պարտաւորուեցին Մոսկուայի առջեւ արմատապէս վերափոխել Հայաստանի ներքին գործերի նախարարությունը եւ ոստիկանութիւնը: Ոստիկանութիւնը պէտք է համալրուէր աշխարհազորի առողջ ուժերով: Բոլոր աշխատաւորական խմբերում, մասնաւորապէս արդիւնաբերական ձեռնարկութիւններում, պէտք էր ստեղծուէին բանուորական ջոկատներ, որոնք պէտք է ապահովեն գործարանի, ձեռնարկութիւնների անվտանգութիւնը: Ինչպէս տեսնում ենք՝ ՀՀ ղեկավարութիւնը փորձում էր անկախութեան ուղի դուրս գալ օգտագործելով «խորհրդային խաղի կանոնները»: Յաջորդ փուլը, ինչպէս վերը նշուեց, ջոկատների համախմբումն էր ԳԽի շուրջ:

1990 Հոկտեմբերի 21ին վարչապետ Մանուկեանը ՀՀ ԳԽում ներկայացրեց մշակուած բանակաշինութեան հետեւեալ ծրագիրը.

1. Զինուած տարանջատուած ջոկատների համախմբում, կարգուկանոնի ստեղծում:
2. Նրանց բաշխում ներքին գործերի նախարարութեան, քաղաքացիական պաշտպանութեան համակարգերի, ԴՕՍԱԱՖի[47] կառոյցներում, խորհրդային բանակի զօրաջոկատներում, քանի որ ԳԽ որոշման համաձայն հայ երիտասարդները պէտք է ծառայէին միայն Հայաստանում: Այդ քայլով ապահովւում էր «*զինեալ միաւորումներին պետական կառուցուածքների մէջ ներգրաւելը*»[48]:
3. Պաշտպանութեան կոմիտէի ստեղծում:
4. Արտասահմանի հայազգի *բիզնէսմէն*ների հետ համագործակցութիւն ֆինանսական միջոցներով ապագայ բանակը ապահովելու համար, քանի որ բանակաշինութիւնը մեծ ծախսերի հետ էր կապուած:

Հայերը չէին ցանկանում ծառայել Հայաստանում տեղակայուած խորհրդային 6րդ բանակի զօրքերում: Որոշակի դեր խաղաց դրանում նաեւ ազգային կուսակցութիւնների դիրքորոշումը: ԱԻՄ նախագահ Հայրիկեանը

---

[47] ԽՍՀՄում գործող բանակին, օդուժին եւ նաւատորմին աջակցող կամաւոր ընկերութիւն. անուանումը ստացել է ռուսերէն յապաւումից՝ *ДОСААФ, Добровольная общество содействия армии, авиации и флоту*:

[48] Մանուկեան, էջ 72. նաեւ՝ https://vazgenmanukyan.am/wp-content/uploads/2021/12/Armenian-Dream-in-the-Deadlock-of-Survival.pdf :

անբարոյականութիւն անուանեց խորհրդային զօրքերում ծառայութեան կազմակերպումը: Դէմ էին դրան նաեւ ՀՀԿն եւ ՀՅԴն[49]:

ԳԽում այդ հարցի առթիւ ելոյթ ունեցաւ Տէր Պետրոսեանը: Ուկրաինան ազգայնացրել էր իր երկրում գտնուող խորհրդային բանակը, դրա ընկերային եւ տնտեսական հարցերը վերցնելով իր վրայ, ադրբեջանցիներն իւրացրեցին իրենց երկրում տեղակայուած խորհդային 4րդ բանակի սպառազինութիւնները, իսկ ՀՀն համաձայնեց 7րդ բանակի իր տարածքում ներկայութեանը: Դրանում պէտք է ծառայէին նաեւ հայ զինուորներ, բայց դա համարւում էր Ռուսաստանի Դաշնութեան (ՌԴ) բանակ: Պէտք է պայմանագրով դա կարգաւորուէր: Պայմանաւորուածութիւն կար, որ ստեղծուող ազգային զօրագունդը սպառազինութեան մասով նախկին ԽՍՀՄից կը ստանայ այնքան, որքան կը ստանայ Ադրբեջանը:

Սարգսեանը խօսելով բանակի մասին 1992ի սկզբին նշում էր, որ այն աւելի արագ է ստեղծւում, քան ընդունւում են համապատասխան օրէնքները: Բանակաշինութեան վերաբերուող օրէնքների նախագծերը ետ էին տրուել ոչ-հայեցի եզրոյթների պատճառով: Սարգսեանը անդրադարձաւ նաեւ այդ հարցին. «*Առանց աղաղակի ենք անում: Դա ճիշտ է: Եւ օրէնքները հետ են ընկել, եւ ես ձեզ կը խնդրէի օրէնքները հասնեն բանակի ստեղծմանը: Ներկայացուած փաստաթուղթը ես կը խնդրէի խորհրդարանից, որպէսզի ընդունի, որովհետեւ այդ նոյն հայեցի մտածելակերպը մենք էլ ունենք: Մի ժամանակ ես էլ զբաղւում էի գրականութեամբ եւ կարծեմ վատ գրող չէի: Բայց երբեմն շահերն աւելի կարեւոր են, քան ասենք ցանկութիւնները: Հիմա ես կը խնդրէի օրէնքն ընդունուի այնպէս, ինչպէս որ կայ, քանի որ բազմաթիւ նրբութիւններ կան: Բայց հասկացէք սպաները, որ պիտի գան Հայաստան, գալու են ոչ թէ Հաբեշստանից կամ Թուրքիայից ..., այլ ... նոյն ԷՍԷՆԳԷ[50]ի երկրներից: Եւ որպէսզի այդ բալանսը պահպանուի, ամենաառաջին հերթին անհրաժեշտ է անցումը լինի սահուն, անհրաժեշտ է, որ դա պահպանուի...*»[51]: Նա նշեց նաեւ, որ խորհդային երկրի կազմալուծման հետ մէկտեղ տեղի է ունենում թալան, որը պէտք է վճռականօրէն կասեցուի: «*Կազարմաների քարերն են հանում, տանում, մարտագլխիկների միջից վառօդը տանում են Թուրքիա: Տեսքով բոլորովին նոր մեքենաներից հանուած են աւտոմասերը: Անդրկովկասի օկրուգային հակաօդային ուժերի հրամանատարի հրամանով հոթիռները իջեցուած են եւ մեր օդային սահմանը պաշտպանուած չէ*»: Նա տեղեկութիւններ ունէր, որ Արթիկի եւ Ստեփանաւանի զօրամասերը պէտք է դուրս բերուէին ՀՀից, իսկ

---

[49] ՀՀՇ ղեկավարութիւնը զգուշաւոր քաղաքականութեան կողմնակից էր, ուզում էր պատրանք ստեղծել, որ ենթարկւում է Մոսկուային թելադրած խաղի կանոններին:

[50] Նկատի ունէր ԱՊՀն (ռուսերէն СНГ յապաւումից՝ содружество независимых государств), այսինքն՝ անկախ պետութիւնների համագործակցութիւն, որը ստեղծուեց ԽՍՀՄ փլուզումից յետոյ:

[51] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.183, էջ 96:

այնտեղ հիմնականում հռթիռներ էին: Նշեց, որ դա պէտք է կանխել: Արծուաշէն գիւղից հանուել էր խորհրդային 7րդ բանակի այն դասակը, որը պէտք է այդ գիւղը պաշտպանէր: Ռազմավարական զէնքը հանւում էր ՀՀից, ոչնչացւում էին գաղտնի փաստաթղթերը: Սարգսեանը դիմելով խորհրդարանին քաղաքական որոշում էր ակնկալում: Նա ուզում էր, որ խորհրդարանը թոյլ տայ դիմելու վճռական քայլերի, որ զէնքը ՀՀից չհանուի: Դիմելով խորհրդարանին, նա նշեց՝ «*ամէն ինչի մէջ քաղաքական խաղեր չփնտռէք եւ էսօր չափազանց պատասխանատու պահ է, կարողանանք ճիշտ քաղաքական որոշում ընդունել: Ես համաձայն չեմ այս կողմնորոշմանը, որը կոչւում է ռուսական կողմնորոշում: ...ռուսական կողմնորոշումը մեզ խանգարում է եւ նրանք մեզ յաւերժ խաբելու են, խաբել են միշտ եւ հիմա էլ խաբելու են, ու իվերջոյ դատարկ տաշտակն է մնալու*»[52]: Տէր Պետրոսեանը ճիշտ չէր համարում ռուսաստանեան 7րդ բանակի ազգայնացումը, ինչպէս առաջարկում էր ԱԺՄ[53]ն, սակայն գտնում էր, որ օրէնսդրական յենք է պէտք, որ սպառազինութիւնը երկրից դուրս չտարուի: Բայց մինչեւ այդ յենքը ստեղծուէր պետութիւնը արդէն վտանգուած էր:

Անհանգիստ վիճակ էր նաեւ Թուրքիայի հետ սահմաններում: Ձեւականօրէն այնտեղ էին տեղակայուած ինչպէս նախկինում խորհրդային, այժմ արդէն ՌԴ սահմանապահ զօրքերը: Սակայն այդ զօրքերում տիրող անիշխանութեան մթնոլորտում իրականում սահմանը յուսալիօրէն պաշտպանուած չէր: ԳԽում այդ հարցը պարբերաբար բարձրացւում էր: Մասնաւորապէս Նաւասարդեանը 1992 Ապրիլի 13ի նիստում ահազանգում էր «...*ԱՊՀի, Ռուսաստանի սահմանապահ զօրքերի կողմից Հայաստանի Հանրապետութեան Թուրքիայի հետ ունեցած սահմանը գործնականօրէն չի հսկւում եւ չի պաշտպանւում: Մուտքն ու ելքը երկկողմանիօրէն ազատ է տարբեր երկրների հետախուզական եւ դիւերսիոն խմբերի համար: Համոզուած ենք, որ ներկայումս Հայաստանում, ազատօրէն գործում են տարբեր երկրների հետախուզութիւնների գործակալներ: ...Հայաստանից պարբերաբար դուրս են հանւում կամ տեղում ոչնչացւում դեռ հռչակագրով Հայաստանի սեփականութիւն հանդիսացող ծանր ու թեթեւ զէնքերի, զինամթերքների խոշոր քանակութիւններ*»[54]:

Այդ խառը ժամանակահատուածում Ապրիլի 8ի լոյս 9ին Բալահովիտի զինապահեստներում խոշոր պայթիւն էր տեղի ունեցել եւ մեծ քանակութեամբ զէնք էր ոչնչացուել: Նաւասարդեանը տարակուսում էր, որ անկա-

---

[52] ՀԱԱ, Ֆ.207, ց.62, գ.184, էջ 92:

[53] Ազգային ժողովրդավարական միութիւնը (ԱԺՄ) հիմնադրել էին Վազգէն Մանուկեանն ու ՀՀՇից դուրս եկած նրա համախոհները, 1991ին: 1991 Սեպտեմբերի 26ին, Մանուկեանը սուր հակասութիւններ ունենալով ՀՀՇ ղեկավարութեան հետ հրաժարական էր տուել վարչապետի պաշտօնից: Կուսակցութիւնը պաշտօնապէս գրանցուեց 1992 Մարտի 19ին:

[54] ՀԱԱ, Ֆ.207, ց.62, գ.194, էջ 176:

խութեան հռչակումից յետոյ անցել է 2 տարի, բայց դեռ չկայ ՀՀ «*ռազմաքաղաքական եւ ռազմական դոկտրինա եւ նրան համապատասխան Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժեր, պետական կանոնաւոր բանակ, սահմանապահ զօրք, հետախուզութիւն...*»[55]: Ճիշտ է, 1992 Յունուարի 28ին կառավարութիւնն ընդունել էր «ՀՀ պաշտպանութեան նախարարութեան մասին» որոշումը[56], բայց համակարգի ձեւաւորումը իրօք ուշանում էր:

Փաստօրէն 1990-92՝ քննարկումները ընթանում էին հետեւեալ հարցերի շուրջ.- ստեղծել բանակ թէ՞ ոչ, եթէ այո, ապա ո՞ր պահին ստեղծել այն եւ ի՞նչ ճանապարհով: Սկզբնական փուլում իրօք այդ հարցերն էին էական, բայց յետագայում ԳԽում երբեւիցէ չքննարկուեցին հետեւեալ հարցերը.- ինչպիսի՞ բանակ է պէտք ՀՀին, ո՞րն է լայն առումով ՀՀի պաշտպանութեան վարդապետութիւնը: Մինչդեռ այնպիսի շրջապատում, ինչպիսին ունէր եւ ունի ՀՀն, այդ հարցերը խիստ այժմէական են: Անհատ պատգամաւորներ (օրինակ, Աշոտ Նաւասարդեանը) բարձրացրել են պաշտպանութեան վարդապետութեան վերաբերող հարցեր, բայց պատգամաւորների մեծ մասը դեռ չէր հասունացել բանակաշինութեան, երկրի պաշտպանութեան վերաբերեալ այդ խորութեամբ հարցերի քննարկմանը:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔՈՒՄ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՕՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ: ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՁԵՒԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԳԽՈՒՄ

1991ից հայ-ադրբեջանական հակամարտութիւնը գնալով սրւում էր եւ պատգամաւորներին թւում էր, որ անհրաժեշտութիւն կայ ունենալու մի ղեկավար մարմին, որը անընդհատ փոփոխուող իրավիճակում կը կողմնորոշուէր եւ որոշում ընդունելու պատասխանատուութիւն կը վերցնէր: Հրատապ լուծում պահանջող հարցեր էին ծագում նաեւ ներքին քաղաքականութեան ոլորտում: 1991 Մայիսի 23ի ԳԽ նիստում քննարկուեց ՀՀ նախագահի պաշտօն ստեղծելու հարցը: Ձեկուցումով հանդէս եկաւ, Մանուկեանը, որ տեղեակ պահեց, որ 1991 Մայիսին Հայաստան են եկել աշխարհի խոշորագոյն հայ 250 *բիզնէսմէն*ներ: Մայիսի 25ին մեծ միջոցառում պէտք է լինէր, որտեղ կը քննարկուէին համազգային հարցեր, այնպիսի կառոյցների ստեղծման հարցը, որ «*աշխարհով սփռուած մեր ազգը կարողանայ հանդէս գալ որպէս մի ամբողջութիւն իր կառոյցների մէջ*»[57]: Մանուկեանը ինչեցրեց այն միտքը, որ հանրապետութեան կառուցուածքը չի համապատասխանում երկրի համար առկայ մարտահրաւէրներին, որ «խճճուած յարաբերութիւններ են» ԳԽի եւ նախարարների խորհրդի միջեւ, մինչդեռ եր-

---

[55] Նոյն :

[56] Աւելի մանրամասն այդ մասին տես՝ Մինասեան, էջ 143-45:

[57] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.110, էջ 16:

կիրը գործուն կառավարման կարիք ունի: Խօսեց կառավարութեան կառուցուածքային փոփոխութիւնների անհրաժեշտութեան մասին, նոր նախարարութիւնների մասին:

1991 Յունիսի սկզբի նիստին դարձեալ քննարկուեց ներքին քաղաքական իրավիճակը: Վերլուծելով պետութեան 10 ամսուայ փորձը, պատգամաւորների մի մասը եկել էր եզրակացութեան, որ թերացումների պատճառը չգոյութիւնն է գերագոյն իշխանութեան մարմնի, որը զբաղուի քաղաքականութեան մշակմամբ եւ դրա արագ իրագործմամբ: Նախագահի պաշտօնի հիմնման կողմնակիցները գտնում էին, որ ԳԽն չի կարող գործուն արձագանգել իրադարձութիւններին եւ արագ որոշումներ ընդունել: Լայն լիազօրութիւններ էին տրուել կառավարութեանը, որը հնարաւորութիւն տուեց արագ արձագանգել օրուայ պահանջներին, բայց դա դարձեալ հակասութիւններ առաջացրեց խորհդարանի եւ կառավարութեան միջեւ: Պարզ չէր նաեւ ում են հաշուետու տեղական խորհուրդները՝ ԳԽ՞ին թէ՞ կառավարութեան:

ԳԽում քննարկումների ընթացքում եղան բազմաթիւ առաջարկներ.

- Անմիջապէս անցնել նախագահի ընտրութեանը (ընդ որում ընտրութեան 2 ճանապարհ էր առաջարկւում՝ ԳԽի կողմից կամ հանրաքուէով)
- Ընդլայնել ԳԽ նախագահի իրաւասութիւնները
- Ընդլայնել ԳԽ նախագահութեան իրաւասութիւնները
- Ստեղծել պետական խորհուրդ եւն.:

Սահմանադրական յանձնաժողովը ուսումնասիրելով այդ առաջարկութիւնները եզրակացրել էր, որ պէտք է արագացնել ՀՀ սահմանադրութեան ընդունումը եւ դրա միջոցով բարձրացնել պետական կառավարման մեքենայի արդիւնաւէտութիւնը: Որպէս ժամանակաւոր միջոց, յանձնաժողովը առաջարկում էր կատարել նախագահի ընտրութիւն: Իսկ կառուցուածքը արդէն կ'որոշուէր սահմանադրութեամբ: Դիտարկւում էր, որ նախագահի պաշտօնի հիմնումը կ'ազատէր ԳԽն առօրեայ հարցեր լուծելուց եւ հնարաւորութիւն կը տար առաւել արդիւնաւէտ աշխատել եւ կենտրոնանալ օրինաստեղծ գործունէութեան վրայ:

1991 Յունիսի 25ին ԳԽն որոշեց հիմնել հանրապետութեան նախագահի պաշտօնը: Եթէ Անկախութեան հռչակագրում նշւում էր, որ հայ ժողովրդի անունից կարող է հանդէս գալ միայն ԳԽն, ապա 1991 Օգոստոսի 1ին ընդունուած «ՀՀ նախագահի մասին» օրէնքում նշւում էր, որ նա ներկայացնում է ՀՀն երկրի ներսում եւ միջազգային յարաբերութիւններում, այսինքն ստացւում էր որ նոյնպէս հանդէս է գալիս ժողովրդի անունից: ԳԽն իր լիազօրութիւնների մի մասը զիջեց ՀՀ նախագահին: 1991 Հոկտեմբերի 16ին ՀՀ առաջին նախագահ ընտրուեց Լեւոն Տէր Պետրոսեանը:

Նախագահի պաշտօնի հիմնումով փաստօրէն ՀՀում մտցուեց նախագահական կառավարման ձեւը: Սակայն օրէցօր սրուող ներքաղաքական հակասութիւնները դրանով ոչ միայն չմեղմուեցին այլեւ առաւել սրուեցին:

ԳԽՆ անընդհատ բախւում էր այն խնդրին, որ իր լիազօրութիւնների մի մասը զիջելով նախագահին, կորցրել էր քաղաքական կեանքի վրայ իր նախկին ազդեցութիւնը: ԳԽում ընդդիմութեան լուրջ ուժեր կային եւ դրանք չէին ցանկանում հաշտուել այդ իրավիճակի հետ:

1993 Փետրուարին ԳԽ քննարկումների ժամանակ առաջարկւում էր.

1. ՀՀ ներքին եւ արտաքին քաղաքականութեան հիմնական ուղղութիւնները որոշի խորհրդարանը, ոչ թէ նախագահը:
2. ԳԽ նախագահութեան ներկայացմամբ ընտրել Գերագոյն դատարանի նախագահին նրա տեղակալին, գլխաւոր դատախազին, Գերագոյն դատարանի նախագահութեան կազմը:
3. ԳԽն հաստատի զինուած ուժերի բարձրագոյն հրամանատարութեան կազմը:
4. Նախագահը միայն կառավարութեան որոշմամբ կարող է նշանակել դիւանագիտական ներկայացուցիչներին:
5. Կառավարութիւնը ձեւաւորուի ԳԽ կողմից:

Այդ առաջարկներով պատգամաւորները (ՀՅԴ, ԱԺՄ, ՌԱԿ) խորհրդարանական հանրապետութեան հայտ էին ներկայացնում[58]:

Պատգամաւորները դժգոհում էին, որ ԳԽն զրկուել է իր վերահսկողութեան գործառոյթից, խախտուած է ԳԽ-կառավարութիւն կապը: Նախագահին մեղադրում էին, որ հաշուի չի նստում ընդդիմութեան հետ: Նախագահն էլ իր հերթին սպառնում էր ցրել խորհրդարանը: Հակասութիւնների պատճառը Ղարաբաղի հարցն էր: 1993ին Քարվաճառի (Քելբաջարի) ազատագրման հետեւանքով ՀՀն միջազգային լուրջ ճնշումների էր ենթարկւում: Նախագահը հակուած էր գնալ զիջումների: Նա ընդունում էր, որ այն պատմականօրէն հայկական տարածք է, բայց միջազգային իրաւունքի տեսանկիւնից համարւում է Ադրբեջանի տարածք: Նշում էր, որ պէտք չէ գնալ արկածախնդրութեան, որովհետեւ երկրորդ համաշխարհայինից յետոյ ոչ մի պետութիւն չի կարող գրաւել այլ պետութեան տարածքներ: Նշում էր, որ եթէ դրա հետ հաշուի չնստենք, «դա կը դառնայ մեր կործանման սկիզբը»[59]: Նա մտավախութիւն էր յայտնում, որ Քելբաջարը չյանձնելու դէպքում պատերազմը կը շարունակուի եւ անյայտ է ինչպէս կ'աւարտուի: Առաջարկում էր ստեղծել Կիպրոսի տարբերակ՝ միջազգային հանրութեան համար ամրագրել ԼՂ սահմանները, ամրապնդուել միջազգային խաղարարար ուժերով, 10-20 տարի բանակցութիւններից յետոյ միգուցէ հնարաւոր կը լինի հասնել նպատակին: Ընդդիմութիւնը համաձայն չէր ազատագրուած տարածքները ետ վերադարձնելուն:

Հակասութիւններ երեւացին նաեւ «ՀՀ քաղաքացիութեան մասին» օրէնքի քննարկման ժամանակ: Դարձեալ բանավէճ եղաւ ԳԽում՝ ազգային

---

[58] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.271, էջ 30:
[59] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.300, էջ 135:

եւ պետականութեան հայեցակարգերի միջեւ: Այդ ժամանակ բաւական աշխուժ էր ԳԽ ԱԺՄ խմբակցութիւնը[60], որի կարծիքը արտայայտեց Տիգրան Սարգսեանը: Բարձրացուեց ազգային կառոյցների ձեւաւորման խնդիրը: Նա նշեց, որ ազգային հայեցակարգի դէպքում քաղաքական կենտրոնը, որը որոշում է ազգի ճակատագիրը, ներկայացուած է ոչ թէ պետական իշխանութեան մարմիններով, այլ համազգային կառավարման մարմիններով: Պետականութեան ըմբռնումի դէպքում քաղաքական կենտրոնը հանդէս է գալիս օրէնսդրութեամբ սահմանուած պետական մարմիններով[61]: Կարեւորւում էր երկքաղաքացիութիւնը: Հայ լինելը դրսում պէտք է «տնտեսապէս շահաւէտ լինի»: Արտասահմանի հայերը պէտք է կարողանային հեշտացուած ճանապարհով սեփականութիւն ձեռք բերել ՀՀում: Նրանց կարծիքով դա ձեռնատու էր նաեւ ՀՀ քաղաքացիներին, քանի որ հարկային քաղաքականութեան միջոցով գանձուած միջոցները պետական բիւջէի միջոցով կ'ուղղուէին ՀՀ քաղաքացիների ընկերային պահանջների բաւարարմանը:

Տէր Պետրոսեանը կտրականապէս դէմ էր այդ գաղափարներին, նոյնիսկ համարելով դրանք ֆաշիստական: Նրա կարծիքով «ազգային գաղափարախօսութիւն» հասկացութիւնը կեղծ քաղաքական *կատեգորիա* է, որովհետեւ «*ժողովրդավարութեան պայմաններում... անհնար է ողջ ազգին համախմբել մէկ միասնական գաղափարախօսութեան շուրջ: Դրա վերջը ֆաշիզմն է: Միշտ էլ կը լինեն մարդիկ կամ մարդկանց խմբեր, եւ դա նրանց լիակատար իրաւունքն է, որոնք երբեւիցէ չեն ընդունի այդ գաղափարախօսութիւնը: Գաղափարախօսութեան մենատիրութիւնը հնարաւոր է միայն բռնապետութեան պայմաններում...*»[62]: Ընդդիմութիւնը խիստ բացասական դիրքորոշում էր գրաւել նախագահի *ինստիտուտի* նկատմամբ եւ այդ տրամադրուածութիւնը յատկապէս ուժեղացաւ սահմանադրութեան գրոյթը քննարկելու շրջանում:

Այսպիսով, 1992-93ի ընթացքում երկրում պետութեան կառավարման համակարգի անկատարութեան հետ կապուած լուրջ խնդիրներ էին ծագել: ՀՀ քաղաքական դաշտը 1990ականներին անընդհատ ձեւափոխումների մէջ էր, այն կայուն վիճակում չէր, հետեւապէս քաղաքական հակասութիւնները ոչ միայն անխուսափելի էին, այլեւ խիստ անկանխատեսելի, երբեմն՝ պայթունավտանգ: Հակասութիւնները յատկապէս սրւում էին այն շրջանում, երբ պատերազմական դաշտում թշնամին յարաբերական յաջողու-

[60] Խմբակցութիւնը պաշտպանում էր Մանուկեանի ստեղծած հայերի «համաշխարհային ազգ» լինելու գաղափարը եւ առաջարկում պետութեան քաղաքականութիւնը մշակելիս հաշուի նստել դրա հետ:

[61] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.292, էջ 7:

[62] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.365, էջ 9:

թիւններ էին արձանագրում: Բանավէճն ընթանում էր հետեւեալ հարցերի շուրջ.

1. Ինչպիսի՞ն պէտք է լինի հայկական պետութիւնը
2. Ի՞նչ ճանապարհով պէտք է մշակուի եւ ընդունուի սահմանադրութիւնը
3. Ինչպիսի՞ն պէտք է լինի Արցախի ճակատագիրը եւ ինչպիսի՞ն պէտք է լինի խաղաղութեան գինը
4. Ի՞նչ տնտեսական բարեփոխումներ պէտք է իրականացուեն, ի՞նչ արագութեամբ եւ ինչպէ՞ս
5. Ինչպիսի՞ն պէտք է լինի ՀՀ արտաքին կողմորոշումը:

Ընդ որում շատ հարցերի պատասխանը մեծապէս կախուած էր սահմանադրութեան մշակման ուղուց: Սահմանդրութեան մշակման եւ ընդունման վերաբերեալ կային հետեւեալ հիմնական տարբերակները.-

- Սահմանդրութիւնը պէտք է մշակի եւ ընդունի Սահմանադիր ժողովը:
- Սահմանդրութիւնը պէտք է մշակի ԳԽ ստեղծած սահմանադրական յանձնաժողովը եւ ընդունի ԳԽն՝ ձայների 2/3ով:
- Սահմանդրութիւնը պէտք է մշակի սահմանադրական յանձնաժողովը, իսկ ընդունուի հանրքուէի միջոցով:

Առաջին տարբերակի ամենաջերմ եւ հետեւողական պաշտպանը Հայրիկեանն էր: Նա յիշեցնում էր, որ առաջարկում էր, որ նախագահը ընտրուի մէկ տարով եւ մէկ տարի յետոյ սահմանադիր ժողովը ընդունի սահմանադրութիւնը: Բայց պատգամաւորները չընդունեցին դա, իսկ այժմ 141 ստորագրութիւն էր հաւաքուել եւ 6 կուսակցութիւններ՝ ԱԺՄ, ՍԻՄ, ՀԿ, ՀՅԴ, Քրիստոնեայ ժողովրդական միութիւն եւ ԱԻՄ, միաւորուել էին եւ պահանջում էին սահմանադիր ժողովի գումարում[63]:

Ինչո՞վ էին հիմնաւորւում այդ մօտեցումը ընդդիմադիրները: ԳԽն ընտրուել էր 1990ին, երբ բոլոր ընդդիմադիր ուժերը (ազատականները, ազգայնականները, պահպանողականները եւ դրանց միջանկեալ ուղղութիւնների հետեւորդները) միաւորուած էին կոմունիստների դէմ եւ սկզբնապէս ԳԽում կար 2 մեծ խմբաւորում՝ կոմունիստական եւ ՀՀՇական: Բայց ԽՍՀՄ փլուզումից յետոյ[64] Կոմունիստական կուսակցութիւնը այլեւս վճռորոշ դեր չունէր եւ ի տարբերութիւն, օրինակ ՌԴի, իր ազդեցութիւնը ՀՀում չպահպանեց: Աւելին՝ շուտով այն տրոհուեց միքանի կուսակցութիւնների: Այնպէս որ 1991-92ի քաղաքական դաշտի պատկերը արամատապէս այլ էր: Եւ դա պարզորոշ երեւում էր ԳԽում ստեղծուած խմբակցութիւններից եւ պատգամաւորական խմբերից: Եւ Կոմկուսից, եւ ՀՀՇից դուրս էին եկել պատգա-

---

[63] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.271, էջ 144:

[64] Փփաստացիօրէն ԽՍՀՄի գոյութիւնը դադարեց 1991 Դեկտեմբերի 8ին, երեք հանրապետութիւնների՝ Բելառուսի (ԲԽՍՀ), Ռուսաստանի (ՌԽՖՍՀ) եւ Ուկրաինայի (ՈՒԽՍՀ) ղեկավարների, Մինսկի մօտակայքում գտնուող Բելովեժսկ բնակավայրում ստորագրած համաձայնագրի արդիւնքում:

մաւորներ, որոնք տարբեր կուսակցութիւնների ներկայացուցիչներ էին եւ ըստ դրա ներկայացնում էին տարբեր խմբակցութիւններ: Սահմանադիր ժողովը որպէս նորընտիր մարմին աւելի ճիշտ կ'արտայայտէր ուժերի նոր յարաբերակցութիւնը եւ կը նպաստէր պետութեան ճիշտ մոդէլի ընտրութեանը:

1993-95ի քաղաքական առճակատման պատճառով ԳԽն պարբերաբար դառնում էր անգործունակ՝ հարցերի քննարկումը անվերջ ձգձգում էր, ինչը բերում էր պետութեան համար խիստ կարեւոր ոլորտներում իրաւական բացերի, չէր ապահովւում անհրաժեշտ մեծամասնութիւնը՝ կարեւորագոյն օրինագծերի ընդունման ժամանակ: Հիմնուելով ստեղծուած իրավիճակի վրայ, իշխող կուսակցութեան՝ ՀՀՇի ղեկավարները գտնում էին, որ սահմանադրութիւնը պէտք է մշակի ԳԽ սահմանադրական յանձնաժողովը, քննարկուի ԳԽում, բայց ընդունուի հանրաքուէի միջոցով:

ՀՀն պէտք է լինի նախագահական հանրապետութիւ՞ն թէ՞ խորհրդարանական: Սա յաջորդ ամենաքննարկուող հարցերից էր: Երկու ամենամեծ կշիռ ունեցող կողմերը նժարի տարբեր կողմերում էին: ՀՀՇն նախագահականի կողմակից էր, ԱԺՄն, ՀՅԴն՝ խորհրդարանականի: Նրանց կարծիքով դա «*Ներքին քաղաքականութեան մէջ շանս կը տայ խուսափել թայֆայականութիւնից, ու գտնում եմ, այժմեան պրեզիդենտական կառավարման համակարգը դա թայֆայական համակարգ է, դա կուսակցական համակարգ չի*»[65]: Իվերջոյ խորհրդարանական մոդէլը պաշտպանեցին 6 ընդդիմադիր կուսակցութիւններ, ընդունելով այն միաձայն, այդ պատճառով սահմանադրութեան այդ նախագիծը ստացաւ '6եակի նախագիծ' անուանումը: Յայտնի սահմանադրագէտ Վլադիմիր Նազարեանը 1994 Յունիսի 13ին ներկայացնելով այդ նախագիծը նշում էր, որ այն կառուցուած է ազգային առանձնայատկութիւնների եւ համամարդկային արժէքների համադրմամբ: Հաշուի առնելով, որ ՀՀն յետբռնատիրական երկիր է, նախագծի պաշտպանները եկել էին այն եզրակացութեան, որ այդպիսի երկրներում այլ շղարշի տակ շատ յաճախ ձեւաւորւում են նոր բռնատիրութիւններ: Ուսումնասիրել էին Գերմանիան՝ Հիտլէրից յետոյ, Իտալիան՝ Մուսոլինիից յետոյ, Սպանիան՝ Ֆրանկոյից յետոյ, յետպատերազմեան Ճապոնը: Նրանց կարծիքով խորհրդարանական հանրապետութիւնը կարող էր պաշտպանել դրանից[66]: Կային նաեւ միջանկեալ կարծիքներ:

Իվերջոյ՝ 1994ին քննարկման ներկայացուեց 2 հիմնական տարբերակ՝ Սահմանադրական յանձնաժողովինը եւ 6եակինը: Մասնագէտները գնահատելով այդ տարբերակները նշում էին, որ երկուսում էլ թերի են ներդրուած իշխանութեան թեւերի հաւասարակշռման գործիքակազմերը: Փորձ էր արւում գտնել այդ երկու տարբերակների միջինը: Շատերը

---

[65] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.272, էջ 67:

[66] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.374, էջ 172:

սկզբունքօրէն դէմ չլինելով Սահմանադիր ժողովի գաղափարին, այդ ժամանակահատուածում, երբ ժողովուրդը 2 ցրտաշունչ ու շատ դժուար ձմեռներ էր անցկացրել՝ գազի եւ էլեկտրաուժանիւթի պակասի պայմաններում, առաջացել էր ընկերային բեւեռացում, աճել էր աղքատութիւնը, կար ամենաանհրաժեշտ սննդամթերքի պակաս եւ այդ ամէնի հետեւանքով երկրում համընդհանուր հիասթափութիւն էր տիրում, գտնում էին, որ հնարաւոր չի լինի կազմակերպել Սահմանադիր ժողովի ընտրութիւններ եւ փորձում էին այլ տարբերակներ գտնել: 1994ին կրքերն այնքան էին բորբոքուել, որ պատգամաւորները խօսում էին «սահմանադրական փակուղու»[67] մասին, որի ելքը իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ քաղաքական փոխզիջումն էր միայն:

1994-95ին սահմանադրութեան հարցով ԳԽում խիստ շահարգռուած ելոյթներ միքանի անգամ ունեցաւ ՀՀ նախագահը: Տէր Պետրոսեանը պաշտպանում էր ԳԽի սահմանադրական յանձնաժողովի մշակած նախագիծը: Նա հիմնաւորում էր, որ դէմ է, որ սահամնադրութիւնը ընդունուի ԳԽի կողմից, քանի որ դրանում վտանգ էր տեսնում, որ իւրաքանչիւր նորընտիր խորհրդարանի առաջին գործը կը լինէր սահմանադրութեան յարմարեցումը քաղաքական ուժերի նոր յարաբերակցութեանը: Նշեց, որ օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնների «*միմեանցից լիազօրութիւններ կորզելու ներկայ պայքարը, որ յատուկ է բոլոր նորանկախ պետութիւններին, կը դառնար ապակայունացման մշտական գործօն...*»[68]: Նա ընդգծեց նաեւ, որ անկախութեան անցած 4 տարիներն եղել են պետական կառոյցների ձեւաւորման, «*օրէնսդրական դաշտի ստեղծման եւ ընդունուած օրէնքների փորձարկման արդիւնաւէտ տարիներ*»:[69] Նրա կարծիքով այդ նախագծում կային փոխլրացնող եւ հակակշիռների գործիքակազմեր, որոնք պէտք է նպաստէին քաղաքական ճգնաժամերի յաղթահարմանը եւ խոչընդոտէին քաղաքացիական պատերազմին: Նշեց, որ ճիշտ է գտնում նախագահական կարգի պահպանումը եւ «էժանագին ամբոխավարութիւն[70]» անուանեց այն, որ այդ համակարգը դիտւում է որպէս բռնապետական, իսկ խորհրդարանականը՝ ժողովրդավարական: Նա ընդգծեց, որ պետութեան ժողովրդավարական լինելու կարեւոր ցուցիչն են ազատ ընտրութիւնները, դատական իշխանութեան անկախութիւնը: Բացատրեց, որ խորհրդարանական համակարգը կարող է արդիւնաւէտ լինել, եթէ կան պատմականօրէն ձեւաւորուած 2-3 լուրջ զանգուածային կուսակցութիւններ, որոնցից որեւէ մէկը կարող է կազմել խորհրդարանական մեծամասնութիւն եւ դրա շնորհիւ ապահովել կառավարութեան արդիւնաւէտ գործու-

---

[67] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.364, էջ 12:
[68] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.374, էջ 39:
[69] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.374, էջ 40:
[70] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.374, էջ 43:

նէութիւնը: Եթէ կուսակցութիւնները շատ են, այդ դէպքում ձեւաւորւում է թոյլ *կոալիցիոն* կառավարութիւն[71], լինում են պետական յեղաշրջումներ, բռնատիրութեամբ կամ օտարի միջամտութեամբ[72]: Եթէ նոյնիսկ ինչ-որ ժամանակ ՀՀն անցնի խորհրդարանական կարգին, «*միքանի տարի անց մեր հանրապետութիւնը կրկին վերադառնալու է նախագահական համակարգին, բայց արդէն անհուն զրկանքների ու անհամար վնասների գնով*»[73]:

1995 Մայիսի 2ին Վլադիմիր Նազարեանը Սահմանադրական յանձնաժողովի անունից ներկայացրեց 9 ամսուայ աշխատանքի արդիւնքը՝ սահմանադրութեան լրամշակուած տարբերակը: Նա նշեց, որ սահմանադրութեան վրայ աշխատելու 3 տարուայ ընթացքում եղել է «*պետականագիտական եւ սահմանադրական մտածողութեան զարթօնք*»[74]: 1994 Յունիսի կէսից սահմանադրական յանձնաժողովի կազմը համալրուել էր եւ բոլոր նախագծերի դրական կողմերի հաշուառմամբ կազմուել միասնական նախագիծը: Յանձնաժողովի նիստերին ներկայ են եղել ԳԽ բազմաթիւ պատգամաւորներ, գործունէութիւնը լուսաբանուել է ԶԼՄ միջոցով, գործել է իրաւաբանական ենթայանձնաժողովը, որի կազմում կար 2 դոկտոր, 2 թեկնածու եւ 1 գիտական կոչում չունեցող, սակայն օրէնսդրական աշխատանքի փորձ ունեցող մասնագէտ:

Ինչպէս եւ 4 տարի առաջ, երբ ընդունւում էր Հռչակագիրը՝ ամենավիճայարոյց հարցերից է եղել ազգային հիմնախնդիրների արտացոլումը սահմանադրութեան գրոյթում՝ Հայ Դատը, Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման, դատապարտման ու դրա հետեւանքների վերացման պահանջի արտացոլումը: Իվերջոյ այդ տեսակէտի կողմնակիցները յաջողութեան հասան: ԱՄՆ սահմանադրութեան ոճով սկսուող՝ «Մենք Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդը» արտայայտութիւնը փոխարինուեց՝ «*Հայ ժողովուրդը հիմք ընդունելով Հայաստանի անկախութեան մասին Հռչակագրում հիմնարար սկզբունքներն ու համազգային նպատակները*» դրոյթով: Պետութիւնը պարտաւորւում էր նպաստել այլ պետութիւններում գտնուող հայկական պատմական եւ մշակութային արժէքների պահպանմանը, հայ կրթական եւ մշակութային կեանքի զարգացմանը, ազգութեամբ հայերը ՀՀ քաղաքացիութիւնը պէտք է ձեռք բերէին պարզեցուած կարգով:

Յաջորդ վիճայարոյց հարցն էր, թէ ինչպիսին պէտք է լինի պետութեան կառավարման ձեւը՝ խորհրդարանակա՞ն թէ՞ նախագահական: Այդ հարցը

---

[71] Կառավարութիւն, որի կազմում կան միքանի կուսակցութիւններ, որոնք միաւորուել են այս կամ այն նպատակով:

[72] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.374, էջ 47:

[73] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.374, էջ 47:

[74] ՀԱԱ, ֆ.207, ց.62, գ.443, էջ 45:

որոշուեց փոխզիջումներով լուծել՝ փորձ անելով ուժեղացնել իշխանութեան թեւերի հակակշիռների գործիքակազմերը: Այսպէս, ՀՀ նախագահը նշանակելու էր վարչապետին, նրա առաջարկով՝ կառավարութեան անդամներին, ինչը նախագահական համակարգի վկայականն է, բայց կառավարութիւնը պէտք է ԱԺի հաւանութեանը ներկայացնէր իր գործունէութեան ծրագիրը, դրանով ԱԺում դնելով իր վստահութեան հարցը: Եթէ ԱԺն[75] այն չընդունէր, վարչապետը պէտք է հրաժարական տար եւ ՀՀ նախագահը 20օրեայ ժամկէտում պէտք է ընդունէր հրաժարականը եւ նշանակէր նոր վարչապետ:

Սկզբնական տարբերակում գրուած էր, որ միջազգային պայմանագրերը վաւերացնելու էր ՀՀ նախագահը, փոխուած տարբերակում՝ ԱԺն վաւերացնելու էր, նախագահը՝ ստորագրելու: Յանձնաժողովը հանեց «*ՀՀ նախագահը պետութեան գլուխն է եւ ղեկավարում է գործադիր իշխանութիւնը*» ձեւակերպումը, գրելով՝ «*Հայաստանի Հանրապետութեան նախագահը հետեւում է սահմանադրութեան պահպանմանը, ապահովում օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւնների բնականոն գործունէութիւնը*»: Նախատեսուեց, որ ՀՀ նախագահին *իմպիչմենտի* ենթարկելու դէպքում եզրակացութիւն պէտք է տայ ոչ թէ Գերագոյն դատարանը, այլ սահմանադրականը: Որոշուեց, որ սահմանադրութիւնը պէտք է ընդունուի հանրաքուէով: 1995 Մայիսի 12ին ՀՀ ԳԽի որոշմամբ հաւանութիւն տրուեց սահմանադրութեան նախագծին եւ որոշուեց հանրաքուէն անցկացնել Յուլիսի 5ին[76]: Սահմանադրութեան ընդունումով երկրում հաստատուեց կառավարման կիսանախագահական մոդէլը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետականաշինութիւնը պետական *ինստիտուտների* ձեւաւորման եւ ամրապնդման, իրաւական-քաղաքական համակարգի ձեւաւորման եւ համապատասխան կառավարման համար վարչական մեքենայի ստեղծման բարդ եւ բազմաբովանդակ գործընթաց է: ՀՀ 1995ի սահմանադրութեան համաձայն՝ ինքնիշխան, ժողովրդավարական, ընկերային, իրաւական պետութեան ստեղծումն ու պահպանումը, պէտք է լինէր անընդհատ հետեւողական եւ նպատակաուղղուած ջանքեր պահանջող գործընթաց: Նման պետութիւնը պէտք է ապահովէր հասարակութեան բնականոն կենսագործունէութիւնը, կայուն երաշխիքներ ունենար իր քաղաքացիների իրաւունք-

[75] Սահմանադրութեան նախագծում խորհրդարանը վերանուանուել էր Ազգային ժողով:

[76] Այդ օրը անցկացուեցին նաեւ ԱԺ ընտրութիւնները: Յօդուածում դրան չենք անդրադառնում, բայց ըստ էութեան պետականաշինութեան տեսանկիւնից այդ ընտրութիւնները վատ նախադէպ հանդիսացան, քանի որ ընդդիմութիւն-իշխանութիւն լուրջ բախումների, հասարակութեան պառակտման, ժողովրդավարական ընտրութիւնների հանդէպ հաւատի կորստի հիմք հանդիսացան:

ների եւ ազատութիւնների պաշտպանութեան համար: Ինքնիշխանութիւնն ապահովելու համար պէտք է ունենար հզօր տնտեսութիւն եւ կարողանար ճիշտ կողմնորոշուել միջազգային թատերաբեմում: 1991-95ին դրուեցին Հայաստանի Հանրապետութեան որպէս անկախ պետութեան հիմքերը: Այդ տարիներին ձեւաւորուեցին քաղաքական համակարգի հիմնական *ինստիտուտ*ները, ստեղծուեցին կամ փոխակերպուեցին որոշումներ կայացնող կառավարման մարմինները: Անկախութեան հռչակագրի ընդունումից եւ անկախութեան հանրաքուէից յետոյ ձեւաւորուեց անցումային շրջանի իրաւական համակարգը՝ փոփոխուեց խորհրդային օրէնսդրութիւնը, մշակուեցին եւ ներդրուեցին նոր օրէնքներ: ՀՀ սահմանադրութեան ընդունումով պետականաշինութեան առաջին փուլն աւարտուեց, յետագայում պետութեան հիմնական օրէնքի հիման վրայ փոփոխուեց երկրի օրէնսդրութիւնը: Լուրջ փոփոխութիւններ տեղի ունեցան տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգում:

Անցումային փուլում հակասութիւններ առաջացան իշխանութեան թեւերի՝ յատկապէս օրէնսդիր եւ գործադիր մարմինների միջեւ, հակակշիռների գործիքակազմը թոյլ էր, անկախ դատական իշխանութեան բացակայութեան, դրա թուլութեան պայմաններում հասարակութեան մէջ քաղաքական, տնտեսական ճգնաժամերը գնալով սրւում էին:

Հայաստանի անկախութեան վերականգնումը բարդագոյն խնդիր էր, առաւել եւս որ այն ընթանում էր պատերազմի, թշնամական տրամադրուած երկրների կողմից շրջափակման, աղէտի գօտու առկայութեան, փախստականների մեծ ներհոսքի պայմաններում: Այդ ամէնին յաւելուեց տնտեսական համակարգի փոխակերպումը: Խիստ կենտրոնացուած պլանային տնտեսութիւնից շուկայական տնտեսութեան անցման փորձը չկար, այլ երկրների համար մշակուած գործիքակազմերի կիրառումը արտակարգ ցնցումներ առաջացրեց հասարակութեան համար՝ ընկերային մեծ բեւեռացման պայմաններում հասարակութեան մեծ մասը բախուեց աղքատութեան խնդրին, մինչդեռ ժողովրդավարական պետութեան կառուցումը անհնար է առանց մեծաթիւ միջին դասի առկայութեան:

1991-95ը տնտեսական անկայունութեան, ցնցումների բարդագոյն տարիներ էին հայ հասարակութեան համար: Տեղի ունեցաւ կենսամակարդակի շեշտակի անկում, սկիզբ առան գաղթի գործընթացներ, որոնք լրջագոյն հետեւանքներ ունեցան ժողովրդագրութեան վրայ:

Այդ բարդ իրավիճակում ստեղծուեց հայոց բանակը: Վերոնշեալ խնդիրների մեծ մասը կապուած էր նաեւ պատերազմական իրադրութեան, երկրի անվտանգութեանը սպառնացող սպառնալիքների հետ, քանի որ նոր ոտքի կանգնող պետութեան սուղ միջոցները իշխանութիւնները ստիպուած էին լինում ուղղել պաշտպանութեան համակարգին: 1994ը զինադադարից յետոյ համեմատաբար հանգիստ վիճակը ժամանակաւոր բնոյթ էր կրում:

Հայաստանը ճանաչուեց անկախ պետութիւն, սկսեց կապեր հաստատել տարբեր երկրների հետ: Հայաստանի հարեւաններից ՀՀ անկախութիւնը առաջինը ճանաչեց Վրաստանը՝ 1991 Յուլիսի 27ին[77]: Երկրների մեծ մասի կողմից ՀՀ ճանաչման գործընթացն սկսուեց 1991 Դեկտեմբերի 21ի Ալմա-Աթայի համաձայնագրի կնքումից յետոյ, ԽՍՀՄը դադարեց իր գոյութիւնը եւ ստեղծուեց ԱՊՀն: Համաձայնագիրը ստորագրած նախկին խորհրդային հանրապետութիւնները փաստօրէն ճանաչեցին միմեանց անկախութիւնը: 1991 Դեկտեմբերին ՀՀ հարեւաններից անկախութիւնը ճանաչեցին նաեւ Թուրքիան[78], Իրանը: 1991 Դեկտեմբերի 25ին Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը ճանաչեց Ամերիկայի Միացեալ Նահանգները, իսկ դիւանագիտական յարաբերութիւնները հաստատուեցին 1992 Յունուարի 7ին: Հայաստանի Հանրապետութեան եւ Ռուսաստանի Դաշնութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատուեցին 1992 Ապրիլի 3ին: 1992ին դիւանագիտական յարաբերութիւններ հաստատուեցին նաեւ Ֆրանսիայի, Միացեալ Թագաւորութեան, Չինաստանի հետ: 1992 Մարտի 2ից ՀՀն անդամակցեց ՄԱԿին:

1991-95՝ ԳԽ մեծ աշխատանք իրականացրեց միջազգային համաձայնագրերի վաւերացման, ազգային օրէնսդրութեան դրան համապատասխանեցման, միջպետական պայմանագրերի վաւերացման ուղղութեամբ:

Մեծ դժուարութիւնների, զրկանքների եւ տառապանքների գնով հայ հասարակութեանը յաջողուեց վերականգնել հայոց պետականութիւնը, ինչը մեծ ոգեւորութիւն առաջացրեց նաեւ Սփիւռքում: Պետութեան վերականգնումը հնարաւոր եղաւ նաեւ ազգային զարթօնքի շնորհիւ, պատահական չէ, որ պետականաշինութեան ամբողջ շրջանում տեղի էր ունենում ազգային խնդիրների բուռն քննարկում: Այդ շրջանի մեծագոյն ձեռքբերումներից էր նաեւ Արցախի հանրապետութեան ծնունդը:

---

[77] *Հայոց նորագոյն պետականության քառորդ դարը*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2017, էջ 9:

[78] Իրանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատուեցին 1992 Փետրուարի 9ին: Թուրքիայի հետ դիւանագիտական յարաբերութիւններ չհաստատուեցին, քանի որ Թուրքիան նախապայմաններ ներկայացրեց՝ հրաժարուել Հայոց պահանջատիրութինից, չյիշատակել Հայոց Մեծ Եղեռնը եւն.:

THE BASIC ISSUES OF STATE BUILDING IN THE ARMENIAN PARLIAMENT BETWEEN 1990 AND 1995 (SUMMARY)

LILIT ZAKARYAN
lilitzakaryan66@gmail.com

Based on the archival materials of the Armenian parliament and the publications of a number of outstanding actors of the time, the paper focuses on a very dramatic period of the modern history of the Republic of Armenia. It was a time of transition from being a part of the Soviet Union to becoming an independent state, a very complicated process indeed that spanned from 1990 to 1995.

The paper highlights the diverse approaches and perceptions of the MPs concerning a set of topics which were matters of principle during that time.

Particularly, the framework for the crafting of the state in the Proclamation of Independence is highlighted; it included the contents of the proclamation, and its legitimisation, which eventually led to the referendum. The paper studies how legislative scope and range were shaped, in line with the shifts that were taking place in the political arena as new parties were coming to life and parliamentary blocks were being formed. These changes pluralized political life in Armenia, enabled the generation of novel ideas and the raising of national issues and their resolution. The paper explains the reasons for and causes of structural changes that took place, like the presidency and the constitutional power of both the presidential office and the parliament. The paper touches on the issues of state defense and security, as well as their place in the state structure.